Արա Ղազարյան
Դավիթ Ասատրյան

ՎԻՐԱՎՈՐԱՆՔ ԵՎ ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ



Իրավական պաշտպանության ուղեցույց

Երևան 2025

ՎԻՐԱՎՈՐԱՆՔ ԵՎ ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ.
Իրավական պաշտպանության ուղեցույց

Հեղինակներ՝ Արա Ղազարյան, Դավիթ Ասատրյան

Այս ձեռնարկը 2014 թվականին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից մշակված և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ հրապարակված նույնանուն ձեռնարկի երկրորդ, թարմացված հրատարակությունն է: Վերջին տասը տարվա ընթացքում 1087.1 հոդվածի բազմաթիվ դրույթներ մեկնաբանվել ու վերամեկնաբանվել են դատարանների, ու առաջին հերթին ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից, մինչդեռ այդ նոր մեկնաբանությունները ներկայացված չեն նախորդ հրատարակությունում: Բացի այդ, ի հայտ են եկել նոր երևույթներ, ինչպես օրինակ ընդդեմ հանրային մասնակցության ռազմավարական դատավարությունները (SLAPP), ինչպես նաև զարգացող նոր տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք պահանջում են նոր մոտեցումներ, իրավական նոր լուծումներ, որոնց վերաբերյալ նույնպես տեղի են ունեցել որոշակի զարգացումներ դատական պրակտիկայում:

Ձեռնարկի առաջին մասում ներկայացված են Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում վիրավորանքի ու զրպարտության իրավական սահմանումների վերաբերյալ պարզաբանումներ, դատական պրակտիկայում սահմանված մեկնաբանություններ, իրավական պաշտպանության կարևոր սկզբունքներ, որոնք առավելապես կարևոր են լրագրողների համար: Ձեռնարկի երկրորդ մասում ներկայացված են ուղեցույցներ դատարան դիմելու համար անհրաժեշտ ընթացակարգերի մասին:

Ձեռնարկում լայնորեն վկայակոչված են օրենսդրական նորմեր, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ընդհանուր իրավասության դատարանների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ և որոշումներ, խորհրդատվական բնույթի կանոնագրքեր ու ուղեցույցներ, մեջբերումներ լրատվական հոդվածներից, մասնագիտական մարմինների որոշումներից ու ուղեցույցներից: Նման աղբյուրների վկայակոչումները մեծամասամբ արված են էլեկտրոնային հղումներով, որոնք դյուրին են դարձնում ձեռնարկի օգտագործումը:

Սույն ձեռնարկի ստեղծումը և հրապարակումը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի առատաձեռն աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ինտերնյուս Նեթվորքի ենթադրամաշնորհառու Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

© Ինֆորմացիայի ազատության կենտրոն
© Արա Ղազարյան
© Դավիթ Ասատրյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6

1. Զրպարտությունը 6

1.1. «Զրպարտության» սահմանումը 6

1.2. Չորս նախապայմաններ 6

2. Վիրավորանքը 11

2.1. «Վիրավորանքի» սահմանումը 11

2.2. Երեք նախապայմաններ 11

3. Ստույգ փաստ կամ հայտարարության ճշմարտացիություն 12

4. Գնահատողական դատողություն 13

5. Քննադատական խոսքի թույլատրելի շրջանակները 15

6. Գերակա հանրային շահ 16

7. Ողջամիտ հրապարակում 20

8. Մինչդատական կամ դատական վարույթներում կատարված հրապարակային արտահայտություններ 22

9. Հրապարակային ելույթից, պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթերից բխող արտահայտություններ 22

10. Տեղեկատվության վերարտադրում 23

11. Երրորդ կողմի գրառումները 27

12. Գույքային վիճակ 28

13. Ռազմավարական հայցեր ընդդեմ հանրային մասնակցության (SLAPP) 29

14. Ատելության խոսքի արգելք 30

ԲԱԺԻՆ 2. ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼԸ ԵՎ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ 33

1. Հերքում 35

2. Պատասխանի իրավունք 37

3. Հայցային վաղեմություն 37

4. Դատարան դիմելու կարգը 40

4.1. Հայցի առարկան 40
4.2. Զրպարտությունից պաշտպանվելու հայցի պահանջը 41
4.3. Վիրավորանքից պաշտպանվելու հայցի պահանջը 43
4.4. Պատասխանողի ընտրությունը 43
4.5. Հայցի ապահովման միջոց 45
5. Դատաքննության նախապատրաստական փուլ 46
6. Ապացուցման բեռը 47
7. Փոխհատուցման պահանջ 57

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2010թ. մայիսին ապաքրեականացվեցին վիրավորանքի և զրպարտության համար քրեական պատասխանատվություն սահմանող նորմերը քրեական օրենսգրքում ու դրա փոխարեն Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով սահմանվեցին քաղաքացիական պատասխանատվություն սահմանող նորմեր: Եվրոպայի խորհուրդը այդ քայլը համարեց ազատ խոսքի նշանակալի իրադարձություն, որը համահունչ էր եվրոպական երկրներում ապաքրեականացման ընդհանուր գործընթացին: Կարճ ժամանակ անց ՀՀ սահմանադրական դատարանը և ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրեցին որոշումներ, որոնցում ներկայացրեցին հոդվածի տարբեր դրույթների ծավալուն ու համապարփակ մեկնաբանություններ, որոնք արագորեն տարածվեցին դատական պրակտիկայում: 2012-2024թթ. ընթացքում 1087.1 հոդվածի դրույթները ու դրանց մեկնաբանությունները հետևողականորեն կիրառվեցին դատարանների կողմից՝ ապահովելով կայուն ու կանխատեսելի դատական պրակտիկա: ՀՀ վճռաբեկ դատարանը այդ ընթացքում վերամեկնաբանեց հոդվածի մի շարք դրույթներ՝ դրանք հարմարեցնելով ազատ խոսքի իրավական ու ինֆորմացիայի տարածման տեխնոլոգիական նոր զարգացումներին: Ներկայումս ձևավորվել է հաստատուն նախադեպային իրավունք ու կայուն, կանխատեսելի դատական պրակտիկա վիրավորանքի ու զրպարտության վերաբերյալ դատական գործերով:

Այս ձեռնարկը 2014 թվականին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից մշակված և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ հրապարակված նույնանուն ձեռնարկի երկրորդ հրատարակությունն է: Վերջին տասը տարվա ընթացքում, ինչպես նշվեց, 2010 թվականին ընդունված 1087.1 հոդվածի բազմաթիվ դրույթներ մեկնաբանվել ու վերամեկնաբանվել են դատարանների, ու առաջին հերթին ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից, մինչդեռ այդ նոր մեկնաբանությունները ներկայացված չեն 2014 թվականի հրատարակությունում: Բացի այդ, ի հայտ են եկել նոր երևույթներ, ինչպես օրինակ ընդդեմ հանրային մասնակցության ռազմավարական դատավարությունները (SLAPP), ինչպես նաև զարգացող նոր տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք պահանջում են նոր մոտեցումներ, իրավական նոր լուծումներ, որոնց վերաբերյալ նույնպես տեղի են ունեցել որոշակի զարգացումներ դատական պրակտիկայում, որոնք արտահայտված չէին ձեռնարկի նախկին տարբերակում: Օրենսդրության մեջ նույնպես տեղի են ունեցել փոփոխություններ: Օրինակ, 2021 թվականի դեկտեմբերին 1087.1 հոդվածի 6-րդ կետը լրացվել է չնույնականացվող աղբյուրից տարածված տեղեկատվության վերարտադրության մասին նոր դրույթով, որի վերաբերյալ դատական պրակտիկան դեռ ձևավորման փուլում է, հետևաբար, անհրաժեշտություն է առաջացել այդ դրույթի վերաբերյալ նույնպես ավելացնել պարզաբանումներ:

Ձեռնարկի առաջին մասում ներկայացված են Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում վիրավորանքի ու զրպարտության իրավական սահմանումների վերաբերյալ պարզաբանումներ, դատական պրակտիկայում սահմանված մեկնաբանություններ, որոնց մեծ մասը վկայակոչված են ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներից և Սահմանադրական դատարանի ՍԴՈ-997 որոշումից: Առաջին բաժնում նաև ներկայացված են իրավական պաշտպանության կարևոր սկզբունքներ, որոնք առավելապես կարևոր են լրագրողների համար: Օրինակ, ներկայացված են «բարեխիղճ հրապարակում», «ողջամիտ հրապարակում», «գնահատողական դատողություն» իրավական սկզբունքների մեկնաբանությունները, որոնք տրվել են դատարանների

կողմից: Ձեռնարկի երկրորդ մասում ներկայացված են ուղեցույցներ դատարան դիմելու համար անհրաժեշտ ընթացակարգերի մասին, օրինակ՝ հայցային վաղեմության, հայցի առարկայի ու պահանջի, ապացուցման բեռի բաշխման, փոխհատուցման պահանջի հիմքերի և այլ կարևոր վարույթային իրավունքների, դրանց առանձնահատկությունների մասին:

Ձեռնարկում լայնորեն վկայակոչված են օրենսդրական նորմեր, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ընդհանուր իրավասության դատարանների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ և որոշումներ, խորհրդատվական բնույթի կանոնագրքեր ու ուղեցույցներ, մեջբերումներ լրատվական հոդվածներից, մասնագիտական մարմինների որոշումներից ու ուղեցույցներից: Նման աղբյուրների վկայակոչումները մեծամասամբ արված են էլեկտրոնային հղումներով, որոնք դյուրին են դարձնում ձեռնարկի օգտագործումը:

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զրպարտությունը

1.1. **«Զրպարտության» սահմանումը**
«Զրպարտությունը» Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ սահմանված է հետևյալ կերպ.

«Զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»:

1.2. **Չորս նախապայմաններ**
Որպեսզի արտահայտությունը համարվի զրպարտող, անհրաժեշտ է ցույց տալ չորս նախապայմանների[1] առկայությունը: Այդ նախապայմաններն են
1) հայտարարությունը պետք է լինի **փաստի** մասին (փաստացի տվյալներ),
2) հայտարարությունը պետք է ներկայացված լինի **հրապարակային** եղանակով,
3) հայտարարությունը պետք է **չհամապատասխանի** իրականությանը,
4) հայտարարությունը պետք է լինի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը **արատավորող:**

Սահմանադրական դատարանը նշել է ևս մեկ հատկանիշ՝ անձին վերագրվող արարքը պետք է լինի **հանցագործության կամ զանցանք**[2]: Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանի այս դիրքորոշումը պարտադիր պայման չէ, այլ գնահատողական է: Դատական պրակտիկայում հաճախ են քննվել գործեր, որոնցում խնդրո առարկա արտահայտությունը համարվել է զրպարտող, թեև այդ արարքը որևէ օրենսդրական ակտով արգելված արարք չի հանդիսացել: Մինչդեռ, էական է, որ անձին վերագրվող արարքը լինի հասարակական պատկերացումներով արատավորող:

Այսպիսով, վերը նշված չորս պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում հայտարարությունը Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի իմաստով զրպարտություն չի համարվի:

1.2.1. Փաստի մասին հայտարարություն
Հայտարարություն է, որը ներառում է անձի մասին «փաստացի տվյալներ», որը ներառում է կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի **գործողության** կամ **անգործության** վերաբերյալ: Նման հայտարարությունը չպետք է լինի վերացական, այլ ունենա կոնկրետ առարկայական դրսևորում: Փաստացի տվյալների բացակայության դեպքում

[1] Վճռաբեկ դատարանի՝ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի վերաբերյալ թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով 2012թ. ապրիլի 27-ի որոշում, էջ 8:
[2] Սահմանադրական դատարանի 15.11.2011թ ՍԴՈ-997 որոշում, էջ 10:

արտահայտությունը չի կարող համարվել զրպարտող Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի իմաստով:

«Փաստացի տվյալներ» եզրի նման է մեկնաբանվում նաև Օրենսգրքի 1087.1 հոդվածի «վիրավորանք» հասկացության ներքո օգտագործվող «ստույգ փաստ» եզրը առ այն, որ *«այդպիսիք են հանդիսանում այն փաստերը, որոնք հիմնավորվում են ապացույցներով տեղեկատվության հրապարակման հետ միաժամանակ կամ հանդիսանում են հանրահայտ փաստեր՝ ապացուցման անհրաժեշտություն չունեցող»*:[3]

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ զրպարտող հայտարարության մասին ենթադրելը բավարար չէ հաստատված համարելու համար, որ կոնկրետ անձի վերաբերյալ ասվել է զրպարտող արտահայտություն: Պետք է առկա լինի մի հանգամանք, որի հիման վրա օբյեկտիվ դիտորդն էլ հավաստիանա, որ տվյալ փաստացի հայտարարությունն իրականում հասցեագրված է եղել կոնկրետ տվյալ անձին:

1.2.2. Հրապարակային հայտարարություն

Հրապարակային է այն արտահայտությունը (կամ ներկայացված փաստերը), որը կատարվել է առնվազն մեկ երրորդ անձի **ներկայությամբ**, իսկ եթե հայտարարությունը կատարվել է ռադիոյի, հեռուստատեսության, համացանցի և կապի ու լրատվության այլ միջոցներով, կամ սոցիալական ցանցում, և այլն, ապա՝ երրորդ անձին **հաղորդակից** դարձնելով: Այսինքն, անհրաժեշտ է, որ երրորդ անձը կամ ներկա լինի հայտարարության կատարման պահին, կամ հաղորդակից դարձվի այդ հայտարարությանը: Ընդ որում, կարևոր է հաշվի առնել երրորդ անձի առկայության և հայտարարության կատարման պահի **համաժամանակյա** լինելը՝ երրորդ անձը պետք է հաղորդակից դարձված լինի հայտարարությանը դա կատարելու **պահին,** այլ ոչ թե դրանից հետո: Օրինակ, եթե Ա անձը Բ անձին որևէ տեղեկություն է հաղորդում (առանց երրորդ անձի ներկայության), իսկ որոշ ժամանակ անց Ա անձը նույն տեղեկությունը հայտնում է Գ անձին (կրկին առանց անձի ներկայության), ոչ առաջին և ոչ երկրորդ դեպքում Ա-ի կողմից հնչեցված հայտարարությունները հրապարակային չեն, քանի որ երկու դեպքում էլ հայտարարության կատարման պահին ներկա չի եղել կամ հաղորդակից չի դարձվել որևէ երրորդ անձ:

Արտահայտությունը երրորդ անձի ներկայությամբ կատարված է համարվում նաև այն դեպքում, երբ երկու անձ միասին վիրավորում կամ զրպարտում են երրորդ անձի:
«Մեկ երրորդ անձ» չափանիշը կիրառելի է նաև համացանցի նկատմամբ: Համացանցում, մասնավորապես, սոցիալական ցանցի էջում տեղադրված հայտարարությունը հրապարակային է, եթե առնվազն երրորդ անձը հաղորդակից է դարձվում այդ հայտարարությանը: Դատական պրակտիկայում սահմանվել է «հասանելի է բոլորին» եզրույթը, ըստ որի սոցիալական ցանցերում բոլորին հասանելի եղանակով տեղադրված հայտարարությունը ինքնին հրապարակային հայտարարություն է[4]: Ստացվում է, որ «հասանելի է բոլորին» չափանիշը «մեկ երրորդ անձ» չափանիշի տարբերակն է համացանցի տիրույթում:

---

[3] Վճռաբեկ դատարանի՝ Սոնա Աղեկյանի վերաբերյալ թիվ ԵԴ/26070/02/19 քաղաքացիական գործով 2023թ. մարտի 10-ի որոշում, էջ 11, 2-րդ պարբ.:

[4] Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱԴԴ/0074/02/12 քաղաքացիական գործով վճիռ, էջ 8, պարբ. 2:

«Հրապարակային հայտարարության» վերը նշված կանոններից սահմանված է մեկ բացառություն, ըստ որի հաղորդակցության տարբեր «միջոցներով» հայտարարությունը հասցեատիրոջը ներկայացնելը չի համարվի հրապարակային, եթե հայտարարությունը ներկայացնող անձը բավականաչափ միջոցներ է ձեռնարկել դրանց գաղտնիությունը ապահովելու ուղղությամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնան այլ անձանց[5]:

Հայտարարությունը, որը կատարվել է առանց երրորդ անձի ներկայության կամ նրան հաղորդակից դարձնելու, ոչ հրապարակային հայտարարություն է: Ոչ հրապարակային եղանակով վիրավորական կամ զրպարտող հայտարարությունների դեմ իրավական պաշտպանության միջոցներ սահմանված չեն ՀՀ օրենսդրությամբ: Սա իրավական բաց է, որին անդրադարձել է Սահմանադրական դատարանը ՍԴՈ-997 որոշման մեջ: Սակայն Սահմանադրական դատարանի որոշումը մնում է չկատարված:

1.2.3. Իրականությանը չհամապատասխանող հայտարարության

Այս պահանջը պետք է հասկանալ բառի սովորական իմաստով: Ըստ Վճռաբեկ դատարանի, այդպիսին են սուտ, անհիմն կամ ոչ հավաստի տեղեկությունները [6]: Դատական պրակտիկայում դատարանները պատասխանողների համար սահմանում են ապացուցման բեռ՝ ներկայացնելու համար փաստական տվյալներ, վերաբերելի ապացույցներ հնչեցված արտահայտության հիմքում ընկած հանգամանքը հիմնավորելու համար: Դատարանները նման դեպքում սահմանում են, որ պատասխանողը պետք է տիրապետեր համապատասխան հանգամանքը հիմնավորող վերաբերելի ապացույցների: Օրինակ, եթե անձը մեկ այլ անձի վերաբերյալ հրապարակավ հայտարարել է, որ նա «նախկին կոռուպցիոներ է», դատարանը կարող է հրապարակային հայտարարություն կատարած անձի համար սահմանել քրեորեն պատժելի այդ արարքը, հանգամանքը ապացուցելի բեռ, և եթե պատասխանողին չի հաջողվել ներկայացնել դատարան այդ հանգամանքը հիմնավորող ապացույցներ (օրինակ՝ ուժի մեջ մտած դատական ակտ), դատարանը կարող է եզրահանգել, որ հայցվորի «նախկին կոռուպցիոներ» լինելու մասին հայտարարելիս պատասխանողը պետք է տիրապետեր համապատասխան հանգամանքը հիմնավորող վերաբերելի ապացույցների և եթե նման ապացույցներ չեն ներկայացվել, նշանակում է պատասխանողի կողմից հնչեցված արտահայտությունը սուտ է, անհիմն և ոչ հավաստի և, հետևաբար բավարարում է զրպարտության քննարկվող պայմանին: Դատարանը կարող է նաև եզրահանգել, որ քննարկվող արտահայտությունը զրպարտող է, քանի որ պատասխանողը առանց վերաբերելի և թույլատրելի ապացույցների առկայության մեղադրել է հայցվորին հանցավոր արարք կատարելու մեջ:

Օրենքի 1087.1. հոդվածի 6-րդ մասը հնարավորություն է տալիս զրպարտողին ազատվել պատասխանատվությունից, եթե իր տարածած հայտարարությունը այլ անձի կամ կազմակերպության արտահայտած կարծիքի բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս **հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին կամ հեղինակին**: Նման պարագայում հարց է բարձրանում, թե արդյոք

[5] Վճռաբեկ դատարանի՝ Անիկ Դավթյանի վերաբերյալ թիվ ԱՎԴ/0179/02/13 քաղաքացիական գործով 2014 թվականի մայիսի 8-ի որոշում, էջ 10, պարբ. 2:
[6] Տե՛ս նույն վճիռը, էջ 11, պարբ. 4:

նպատակահարմար է քննել վիրավորելու դիտավորության հարցը, եթե բոլոր դեպքերում հրապարակողը վերահրապարակել է այլ անձի վիրավորական արտահայտությունները:

Այդ առումով Վճռաբեկ դատարանը արտահայտել է դիրքորոշում, որ *նույնիսկ եթե հրապարակողը բարեխղճորեն կամ բառացիորեն հրապարակել է այլ անձի հայտարարությունը և դա անելիս հղում է կատարել աղբյուրին, հրապարակողը չի ազատվում պատասխանատվությունից, եթե ապացուցվի, որ նա իսկզբանե գիտեր կամ ակնհայտորեն պետք է որ իմացած լիներ տեղեկության զրպարտություն լինելու մասին, քանի որ նման դեպքում անձի մոտ առկա է զրպարտելու դիտավորությունը: Այդ դեպքում ինչպես տեղեկատվությունը կրող աղբյուրը, այնպես էլ այդ տեղեկատվությունը հրապարակողը կրում են համապարտ պատասխանատվություն որպես համատեղ վնաս պատճառողներ:*

1.2.4. Արատավորող հայտարարություն

Հայտարարությունը ոչ միայն պետք է իրականությանը չհամապատասխանի, այլև իր բնույթով արատավորող լինի: «Արատավորող» հասկացության իրավական բովանդակությունը սահմանվել է տարբեր դատական ակտերում: Ըստ Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0749/02/10 գործով որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման.

«Արատավորող կարող են լինել այնպիսի տվյալները, որոնք բովանդակում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման, տնտեսական կամ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության, գործարար շրջանառության սովորույթների խախտման և այլ տեղեկություններ, որոնք չեն հիմնավորվում վերաբերելի և թույլատրելի ապացույցներով (իրական չեն), նվաստացնում, նսեմացնում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը[7]:

Ըստ Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ/0179/02/13 գործով կայացրած որոշման մեջ արտահայտած դիրքորոշման.

«Արատավորող արտահայտությունն այն արտահայտությունն է, որը հասարակության անդամների գնահատմամբ նսեմացնում է անձի արժանիքները հանրության շրջանում, նրան ենթարկում է ծաղրուծանակի, ունակ է անձին վերածել ատելության կամ արհամարհանքի առարկայի կամ ստիպում է ամաչել անձին կամ այլ մարդկանց խուսափել տվյալ անձից»[8]:

Առաջին ատյանի դատարանները նույնպես մեկնաբանել են «արատավորող» հասկացությունը: Օրինակ, Կենտրոն և Նորք Մարաշ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը թիվ ԵԿԴ/2293/02/10 գործով վճռում տվել է հետևյալ մեկնաբանությունը.

---

[7] Վճռաբեկ դատարանի՝ Բորիս Աշրաֆյանի վերաբերյալ թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով որոշում, էջ 10, վերջին պարբերություն:

[8] Վճռաբեկ դատարանի՝ Անիկ Դավթյանի վերաբերյալ թիվ ԱՎԴ/0179/02/13 քաղաքացիական գործով 2014 թվականի մայիսի 8-ի որոշում, էջ 9, պարբ. 4:



«Օրենսդիրը պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունների անգամ մոտավոր ցանկ չի սահմանում, թողնելով, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը, ելնելով ձևավորված բարոյական նորմերից, գործարար սովորույթներից, տարածված տեղեկությունների արժեքավորման հասարակական պատկերացումներից, որոշի տեղեկությունների բնույթը և դրանք հերքելու անհրաժեշտությունը: Եթե տարածված տեղեկությունները հանրության կողմից դատապարտելի կամ պարսավելի են, ապա այդպիսիք համարվում են արատավորող»[9]:

Թիվ ԵԿԴ/1963/02/10 քաղաքացիական գործով վճռում ներկայացված մեկնաբանության համաձայն՝



«Արատավորող են համարվում այն տեղեկությունները, որոնք կարող են նսեմացնել քաղաքացու կամ իրավաբանական անձի արժանիքները: Պատիվն անձի օբյեկտիվ գնահատականն է՝ անձի նկատմամբ հասարակության վերաբերմունքը որոշող, ինչպես նաև անհատի բարոյական և այլ վարկանիշների սոցիալական գնահատականն է: Արժանապատվությունն անհատի ներքին ինքնագնահատականն է, անձնական հատկանիշների ընդունակությունների աշխարհայացքի գիտակցումը»[10]:

Եվս մեկ մեկնաբանություն, որ արվել է ԵԱԴԴ/0003/02/11 քաղաքացիական գործով վճռում.



«Պատիվը անհատի հասարակական գնահատականն է, քաղաքացու որոշ հոգևոր և սոցիալական հատկանիշները: Այն մարդու համար հանդիսանում է այնպիսի բարիք, ինչպիսին է իր կյանքը, առողջությունը և ազատությունը: Մարդն, ով գնահատում է իր պատիվը, հավասարեցնում է այն իր բարի համբավին և խղճին:

Արժանապատվությունը անձի կողմից սեփական հատկանիշների, կարողությունների, աշխարհայացքի, իր վարքի, հասարակական նշանակության գնահատումն է:

…Այսինքն՝ պատիվը, արժանապատվությունը կոնկրետ ֆիզիկական անձի որակների (հատկանիշների) մասին ձևավորված կարծիքն է հասարակության մեջ»[11]:

Այսպիսով, «արատավորող» եզրը մեկնաբանելիս դատարանները սահմանել են ոչ թե անձի սուբյեկտիվ ճանաչողության, այլ հասարակական ընկալման հիման վրա գնահատողական չափանիշներ («հանրության կողմից դատապարտելի կամ պարսավելի տեղեկություններ», «ձևավորված բարոյական նորմեր», «գործարար սովորույթներ», «արժեքավորման հասարակական պատկերացումներ», «անձի որակների, հատկանիշների մասի ձևավորված հասարակական կարծիք», այլն): Նման մոտեցումն

[9] Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշում, էջ 13, պարբ. 2:

[10] «Գլենդեյլ Հիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/1963/02/10 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշում, տե՛ս էջ 20:

[11] Գևորգ Հայրապետյանի վերաբերյալ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԱԴԴ/0003/02/11 քաղաքացիական գործով 2011թ. սեպտեմբերի 15-ի որոշում, էջ 7:

արդարացված է, քանի որ անձի սուբյեկտիվ ընկալմամբ հայտարարության արատավորող բնույթը որոշելիս կառաջանար խառնաշփոթ, իրավական անորոշություն, մինչդեռ վերը նշված միասնական չափանիշների ու սկզբունքների օգտագործումը նպաստում է միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը:

2. Վիրավորանքը

2.1. «Վիրավորանքի» սահմանումը

«Վիրավորանք» հասկացությունը Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում սահմանված է հետևյալ կերպ.



«Վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է»:

Այս դրույթը մեկնաբանվել է Վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԵԿԴ/2293/02/10, ԼԴ/0749/02/10 և ԱՎԴ/0179/02/13 որոշումներում: Ըստ այդ մեկնաբանությունների, վիրավորանքը կարող է դրսևորվել խոսքով, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր, պատկերների միջոցով (նկարներ, տարածական պատկերներ), ձայնի (ինչպես բանավոր խոսքը, այնպես էլ տարբեր հնչերանգների կիրառումը), նշանների միջոցով (ժեստիկուլյացիաներ, սիմվոլներ): Հասկանալի է, որ ցանկը սպառիչ չէ և կարող է ընդգրկել արտահայտվելու ցանկացած այլ եղանակ: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ Օրենսդիրն իրավացիորեն չի սահմանափակել արտահայտվելու միջոցների շարքը՝ հնարավորություն տալով իրավակիրառողին կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով որոշել, թե արդյոք տվյալ միջոցի օգտագործմամբ կատարված արտահայտությունը կարող է որակվել որպես վիրավորանք: Հետևաբար՝ վիրավորանքը կարող է արտահայտվել ցանկացած այլ միջոցի օգտագործմամբ, որը ներառված չէ վերոնշյալ թվարկման մեջ:

2.2. Երեք նախապայմաններ

Անհրաժեշտ է ցույց տալ երեք նախապայմաններ արտահայտությունը վիրավորական համարելու համար: Այդ նախապայմաններն են.

1) արտահայտությունը պետք է կատարված լինի **հրապարակային** եղանակով,
2) արտահայտությունը պետք է լինի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը **արատավորող**,
3) արտահայտությունը պետք է կատարված լինի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով, դիտավորությամբ:

Նշված պայմաններից որևէ մեկի բացակայությունը բացառում է վիրավորանքի առկայությունը:

2.2.1. Հրապարակային արտահայտություն

Հրապարակային արտահայտությունը մեկնաբանվում է նույնպես, ինչպես զրպարտության դեպքում, որի մասին նշված է 1.2.2. բաժնում:

2.2.2. Արատավորող արտահայտություն

Արատավորող արտահայտությունը նույնպես մեկնաբանվում է այնպես, ինչպես զրպարտության դեպքում, որի մասին նշված է 1.2.4. բաժնում:

2.2.3. Նպատակի, դիտավորության առկայություն

Ի տարբերություն զրպարտության, վիրավորանքի համար անհրաժեշտ է ցույց տալ վիրավորելու դիտավորությունը: Այս պայմանը վիրավորանքի և զրպարտության միջև հիմնական տարբերությունն է:

Դիտավորության առկայությունը հիմնավորվում է միայն փաստերով՝ առաջին հերթին անձի կոնկրետ **գործողություններով** կամ **հայտարարություններով**, որոնք նախորդել կամ հաջորդել են վիճահարույց հրապարակմանը: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի փաստերի վրա, որոնք ցույց են տալիս, որ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկության կամ հայտարարության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար, կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու հանգամանքի մասին:

Ըստ Վճռաբեկ դատարանի, «*դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին, իր կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյոք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որևէ մեկին, թե՞ օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում*»[12]:

Լրատվամիջոցների պարագայում դատարաններ կարող են ուշադրություն դարձնել այնպիսի հանգամանքիս, երբ հայցվորը մինչև դատարան դիմելը հերքման պահանջով դիմել էր լրատվամիջոցին, մինչդեռ վերջինս, փոխանակ ՋԼՄ-ների մասին օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով մեկշաբաթյա ժամկետում հայտներ հերքում տպագրելու իր համաձայնության կամ անհամաձայնության մասին, փոխարենը նախընտրել է հրապարակել ևս մեկ հոդված, որում կոպիտ քննադատության էր ենթարկել հայցվորին, այդ թվում նաև նրա կողմից հերքման պահանջ ներկայացնելու հանգամանքը: Սույն փաստը դատարանի կողմից գնահատվել է որպես «անհանդուրժողական վարքագիծ» դրսևորելու հանգամանք, որի հիման վրա էլ դատարանը որոշել է ի սկզբանե վիրավորելու մտադրության առկայության մասին:

3. Ստույգ փաստ կամ հայտարարության ճշմարտացիություն

Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում սահմանված են մի շարք կարևոր սկզբունքներ, որոնք հնարավորություն տալիս անձանց ազատվել պատասխանատվությունից վիրավորական կամ զրպարտող հայտարարություններից: Դրանք բացառություններ են, որոնք սահմանված են՝ ելնելով տարբեր առաջնահերթություններից, նպատակներից: Այդպիսին են, օրինակ, հանրային գերակա շահի, ողջամիտ հրապարակման, բարեխիղճ վերահրապարակման և

[12] Վճռաբեկ դատարանի՝ Բորիս Աշրաֆյանի վերաբերյալ թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով որոշում, էջ 10, պարբ. 3:

պատասխանատվությունից ազատվելու այլ հիմքերը: Նման հիմքերը նպատակ են հետապնդում պաշտպանել տվյալ հանգամանքում առավել մեծ կարևորություն ունեցող շահեր ու իրավունքներ, կամ միևնույն իրավահարաբերության շրջանակում փոխհավասարակշռել տարբեր անձանց բախվող, մրցակցող, իրավաչափ շահերը և իրավունքները: Ներկայացնենք իրավական պաշտպանության այդ հիմքերը և սկզբունքները, որոնք կարևոր իրավական պաշտպանության միջոցներ ու երաշխիքներ են:

Իրավական պաշտպանության ամենապարզ ու հուսալի հիմքը հիմնավորելն է, որ վիճահարույց հայտարարությունը հիմնված էր ստույգ փաստի վրա կամ ճշմարտացի էր: Դա բխում է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ մասից, ըստ որի անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության զրպարտության համար, եթե իր կատարած հայտարարությունը ճշմարտացի է: Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունից բխում է, որ անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության վիրավորանքի համար, եթե իր կատարած հայտարարությունը հիմնված է ստույգ փաստերի վրա:

«Ստույգ փաստեր» եզրույթը մեկնաբանվում է որպես այնպիսի փաստեր, որոնք հիմնավորվում են ապացույցներով: Այդ ապացույցները պետք է առկա լինեն **տեղեկատվության հրապարակման պահի դրությամբ:** Ստույգ փաստեր են նաև հանրահայտ փաստերը, որոնք ապացուցման անհրաժեշտություն չունեն: «Ստույգ փաստեր» եզրույթը կիրառելի է նաև 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի դրույթի նկատմամբ, որի մեկնաբանությունը տրված է 3.7 բաժնում:

Այսպիսով, արատավորող բնույթի հրապարակային հայտարարությունը, եթե ճշմարտացի է, զրպարտություն չէ: Նմանապես, ստույգ փաստերի հիման վրա հնչեցված արատավորող բնույթի վիրավորական արտահայտությունը (կամ գնահատող դատողությունը) վիրավորանք չէ: Այս երկու պայմանների առկայության դեպքում դատական հայցը մերժվում է նյութական իրավունքի նորմի բացակայության հիմքով:

4. Գնահատողական դատողություն

Գնահատողական դատողությունը (նաև «գնահատական-դատողություն» կամ «գնահատող դատողություն») սահմանված չէ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածում կամ որևէ այլ օրենսդրական ակտում: Այդուհանդերձ, այս հասկացությունը և դրանով սահմանված պաշտպանական համակարգը լայնորեն կիրառվում է դատական պրակտիկայում, և որպես իրավական հիմք դատարանները վկայակոչում են Սահմանադրական դատարանի ՍԴՈ-997 որոշումը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի[13] և Վճռաբեկ դատարան նախադեպային որոշումները[14]:

«Գնահատող դատողությունը» կարծիք է, ենթադրություն, որևէ առարկայի կամ երևույթի տրված անձի սուբյեկտիվ գնահատական, պիտակավորում: Այս իմաստով գնահատական-դատողությունը «փաստացի հայտարարության» հակապատկերն է: Գնահատական-դատողությունը չի

[13] *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի*, թիվ *9815/82*, ՄԻԵԴ, 8/07/1987, կետ 46:

[14] Օրինակ, Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2293/02/10 և թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով որոշումները: Տե՛ս նաև Վճռաբեկ դատարանի. Հասմիկ Աբովյանի վերաբերյալ թիվ ԵԴ/7480/02/18 քաղաքացիական գործով 21/07/2020թ որոշումը, որով նորովի մեկնաբանվեց «գնահատող դատողություն» եզրույթը:

կարող համարվել փաստացի հայտարարություն, իսկ փաստացի հայտարարությունն էլ չի կարող համարվել գնահատող դատողություն:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ արտահայտությունը չի կարող զրպարտություն որակվել, եթե այն ունի որոշակի փաստական հիմք, և հետապնդում է ոչ թե անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այլ իրենից ներկայացնում է որոշակի փաստական հիմքի վրա ինչ-որ հարցի կապակցությամբ անձի կողմից փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում արվող հետևություն:[15]

Դատական պրակտիկայում դատարանները դատավարության նախապատրաստական փուլում կատարում են գնահատական դատողությունների և փաստացի հայտարարությունների տարանջատում, քանի որ իրավական պաշտպանության հիմքերն այս երկուսի դեպքում տարբեր են: Գնահատողական դատողությունը ենթակա չէ ապացուցման, քանի որ դա փաստի մասին հայտարարություն չէ: Դատարանները չեն կարող սահմանել ապացուցման բեռ գնահատողական դատողության համար: Նման պահանջը անհնարին կլինի կատարել ու կհամարվի անիրավաչափ, անհամաչափ պահանջ: Թիվ ԵԱՔԴ/0642/02/12 քաղաքացական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը հայցվորից պահանջել էր ապացուցել «տուն քանդողներ» արտահայտության ճշմարտացիությունը, իսկ այնուհետև վճռում եզրակացրել, որ հոդվածի հեղինակը *«չի նշել և դատարանում էլ չկարողացավ նշել որևէ փաստ, որ հայցվորի անմիջական գործունեության հետևանքով քանդվել է գոնե մեկ ընտանիք»:* Մինչդեռ դատարանը պետք է հաշվի առներ, որ նշված արտահայտությամբ հեղինակը որակական գնահատական էր տվել ընկերության գործունեությանը, այլ ոչ թե կոնկրետ փաստի՝ տուն քանդելու մասին: Դա կարծիք էր, անձի սուբյեկտիվ տպավորության հիման վրա հնչեցված գնահատական, որը ՝ որպես այդպիսին ենթակա չէր ապացուցման, և նման դեպքերում ապացուցման բեռ սահմանելը ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ սահմանափակում էր: Հետևաբար, գուցե, պետք էր այս արտահայտությունը քննել «վիրավորանք», ոչ թե «զրպարտություն» եզրույթի ներքո:

Ինչպես նշվեց, Վճռաբեկ դատարանը գնահատողական դատողության մանրամասն և նորովի մեկնաբանությունը սահմանել է ԵԴ/7480/02/18 և ԵԴ/26070/02/19 որոշումներում: Դատարանը սահմանել է, որ գնահատողական դատողությունը բացարձակ իրավունք չէ, ենթակա է սահմանափակման ու նման դատողությունը համարվում է անիրավաչափ ու անօրինական, եթե բոլորովին զուրկ է որոշակի փաստական հիմքերից: **Յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել, թե արդյոք տվյալ դատողությունը հիմնված է որոշակի փաստերի վրա:** Հետևաբար, որևէ արտահայտության կամ բառի վիրավորական իմաստ ունենալը ինքնաբերաբար չի կարող հանգեցնել պատասխանատվության: Այս իմաստով կարևոր է բառը մեկնաբանել իր համատեքստում, այլ ոչ թե բովանդակությունից կտրված: Վճռաբեկ դատարանը նշում է, որ որևէ արտահայտության՝ զրպարտություն կամ գնահատողական դատողություն լինելու հարց քննարկելիս այն ոչ թե պետք է գնահատվի մեկուսի՝ անձի ելույթից կամ խոսքի բովանդակությունից առանձնացված և հատվածական, այլ ամբողջ համատեքստի

[15] Վճռաբեկ դատարանի՝ Տրդատ Սարգսյանի վերաբերյալ թիվ ԵԴ/36140/02/19 քաղաքացիական գործով 2024 թվականի հունիսի 10-ի որոշում, էջ 10:

շրջանակում, և որ անձի ելույթից կամ խոսքից վերցված կոնկրետ արտահայտությունն ամբողջ բովանդակությունից կտրված գնահատելու պայմաններում հնարավոր չէ պարզել՝ արդյո՞ք այն որոշակի հարցի վերաբերյալ փաստական հիմքերով ուղեկցվող անձի գնահատող դատողություն, տեսակետ է, թե՞ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու դիտավորությամբ կատարված զրպարտություն: Որևէ արտահայտության՝ զրպարտություն լինելու հարցը պետք է գնահատվի խոսքի բովանդակային համակցության մեջ՝ պարզելու ի վերջո անձն այդ արտահայտություններով ունեցե՞լ է դիտավորություն արատավորելու որևէ մեկի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը, թե՞ փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում բարեխղճորեն և օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատողական դատողությունները:[16]

Կարևոր է նաև կարծիք արտահայտողի նպատակի օբյեկտիվ ընկալումը այլ անձի կողմից, մասնավորապես, այն հանգամանքը, թե հասարակության միջին վիճակագրական անդամը կընկալի արդյոք այդ կարծիքը որպես այլ անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի արատավորման ուղղակի նպատակ ունեցող, թե որպես փաստական հիմք ունեցող գնահատողական դատողություն, սեփական կարծիք՝ որոշակի դեպքերի, իրադարձությունների կամ անձանց վարքագծի վերաբերյալ: Այդ առումով կարևոր է նաև հաշվի առնել Եվրոպական դատարանի սահմանած հետևյալ հինգ չափանիշները.

1) արդյոք վիճահարույց արտահայտությունը ասվել է հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմայի վերաբերյալ,
2) որքանով է հանրահայտ շահագրգիռ անձը և որն է հրապարակման առարկան,
3) շահագրգիռ անձի նախորդ վարքագիծը,
4) տեղեկատվության ստացման միջոցը և դրա արժանահավատությունը,
5) հրապարակման ձևը, բովանդակությունը և հետևանքները:

Նշվածից կարելի է բխեցնել, որ հանրային ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող դեպքերի, իրադարձությունների համատեքստում ասված քննադատական խոսքը, ձևակերպված գնահատողական դատողությամբ, եթե հիմնված է որոշակի փաստական հիմքերի վրա, և հայտարարություն կատարած անձը վիրավորելու նպատակ չի ունեցել, այլ հետապնդել է հանրային շահին ծառայելու նպատակ, պետք է համարվի իրավաչափ, թույլատրելի քննադատության շրջանակում ասված գնահատողական դատողություն:

5. Քննադատական խոսքի թույլատրելի շրջանակները

Ազատ խոսքի պաշտպանությունը Սահմանադրության 42-րդ հոդվածի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիմքերով տարածվում է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք ընդունվում են բարեհաճությամբ կամ համարվում են անվտանգ ու չեզոք, այլ նրանց, որոնք կարող են **վիրավորել**, **ցնցել** կամ **անհանգստություն** պատճառել անձանց: Այդ շրջանակներն առավել լայն են լրագրողների առումով, ըստ որի լրագրողական ազատությունը ներառում է որոշակի աստիճանի չափազանցության և նույնիսկ

[16] Նույն տեղում:

սադրանքի դիմելու հնարավորություն, և այդ իմաստով Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը պաշտպանում է ոչ միայն տեղեկությունների և գաղափարների բովանդակային մասը, այլև դրանց մատուցման եղանակը, օրինակ, ոճը, ժանրը, ֆորմատը, և այլն[17]:

Միևնույն ժամանակ, բարձրաստիճան պաշտոնատար անձանց ու քաղաքական գործիչների նկատմամբ թույլատրելի քննադատության շրջանակներն ավելի լայն են: Քաղաքական գործիչները և հանրային ծառայողները պետք է զսպվածություն ցուցաբերեն և ձեռնպահ մնան վիրավորանքի ու զրպարտության հիմքերով դատական հայցեր ներկայացնելուց՝ հատկապես լրագրողների ու լրատվամիջոցների դեմ, եթե վերջիններիս լուսաբանած փաստերը հանրային հետաքրքրություն են ներկայացնում: Այդ սկզբունքը պայմանավորված է երեք հիմքերով: Առաջին, հանրային մարմինների նկատմամբ քննադատությունը ժողովրդավարական կառավարման անհրաժեշտ պայման է, մինչդեռ նման դատական հայցերը խոչընդոտում են հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ ազատ քննարկումներ անցկացնելը: Երկրորդ, վիրավորանքի ու զրպարտության վերաբերյալ օրենքները հետապնդում են <u>անձնական</u> հեղինակությունը պաշտպանելու նպատակ, մինչդեռ հանրային մանդատով ընտրված մարմինների հեղինակությունը պատկանում է հանրությանը: Երրորդ, պետական մարմիններն ունեն սուր քննադատությունից պաշտպանվելու լայն հնարավորություններ, և պետական մարմինների ու պաշտոնյաների, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների կողմից դատական հայցեր ներկայացնելը դիտարկվում է որպես հարկատուների գումարների վատնում, քանի որ քննադատության նկատմամբ անհանդուրժող կեցվածք ունեցող կառավարությունների համար դա չարաշահումների լայն դաշտ է բացում: Անկասկած է, որ նշված պայմաններն առավել արդյունավետ գործում են այն դեպքում, երբ հրապարակային հայտարարության թեման շոշափում է հանրային գերակա շահ:

Քննադատական խոսքի պաշտպանության իրավական հիմքերը չեն տարածվում ատելության խոսքի վրա: Ատելության խոսքը քրեորեն հետապնդելի արարք է, որը սահմանված է Քրեական օրենսգրքի 329 և 330 հոդվածներով: Այս հոդվածների հետ առնչվում են նաև ցեղասպանության հրապարակային հրահրման և հերքման հանցագործությունները սահմանող 134 և 136-րդ հոդվածները: Ատելության խոսքի առավել նվազ լրջության իրավախախտումները պետք է սահմանվեն վարչական և քաղաքացիական օրենսդրությամբ: Ատելության խոսքի մասին առավել մանրամասնորեն նշված է 3.12 բաժնում:

Տեղեկատվական վեճերի խորհուրդը ատելության խոսքին անդրադարձել է իր թիվ 7 որոշման մեջ:

6. Գերակա հանրային շահ

Գերակա հանրային շահի սկզբունքը անհրաժեշտ է հաշվի առնել որոշելու համար, թե արդյոք տվյալ տեղեկությունը տարածելու նկատմամբ սահմանափակումները կամ դրա համար սահմանված պատասխանատվությունը կիրառվում է համաչափորեն՝ ինչպես պահանջվում է Սահմանադրության 78-րդ հոդվածով: Ըստ էության, այս սկզբունքը հնարավորություն է տալիս խուսափել վիրավորանքի կամ զրպարտության համար

[17] *Պրագերն ու Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի*, թիվ 15974/90, ՄԻԵԴ, 26/04/1995, կետ 38: Տե՛ս նաև Հայկ Բաբուխանյանի գործով Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0790/02/11 քաղաքացիական գործով որոշումը, էջ 30:

նախատեսված պատասխանատվությունից, նույնիսկ եթե վիրավորանքի և զրպարտության առկայության համար բոլոր սահմանված նախապայմանները առկա են, մինչդեռ հանրային շահը գերակայում է:

«Գերական հանրային շահ» սկզբունքը ամրագրված է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի երկու դրույթներում: Առաջինը ամրագրված է վիրավորանքի մասին 2-րդ մասի 2-րդ պարբերության դրույթում, ըստ որի



«հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով»:

Երկրորդը սահմանված է զրպարտության վերաբերյալ 5-րդ մասի 2-րդ կետում, ըստ որի փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացնելը չի համարվի զրպարտություն, եթե այդ փաստացի տվյալները *«տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի*, որ *ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները»:*

Այսպիսով, որոշելու համար, թե տվյալ հայտարարությունը տվյալ հանգամանքում զրպարտություն կամ վիրավորանք է, թե ոչ, դատարանները պարտավոր են փոխհավասարակշռել հայտարարությունը հնչեցրած անձի, օրինակ, լրագրողի, տեղեկություններ ու գաղափարներ տարածելու իրավունքը նման տեղեկություններ ստանալու հանրային շահի և անձի արժանապատվության նկատմամբ հարգանքի իրավունքների հետ: Նման պարագայում էական հանգամանք է, թե արդյոք տվյալ տեղեկությունը տարածելը պայմանավորված էր հանրային գերակա շահով:

Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ «գերակա հանրային շահ»-ի առկայությունը պարզելիս անհրաժեշտ է ոչ միայն գնահատել հանրային հետաքրքրության, հասարակության տեղեկացված լինելու շահի և տեղեկատվության սոցիալական անհրաժեշտության առկայությունը, այլև այդպիսի տեղեկատվություն հաղորդելու թույլատրելի սահմանները, մասնավորապես, բարեխղճության պահպանումը, որը ենթադրում է անձին անվանարկելու դիտավորության բացակայություն: Այսինքն՝ միայն «գերակա հանրային շահ»-ի առկայությունը բավարար չէ վիրավորանքը բացառելու համար, քանի որ դրա անօտարելի բաղադրատարր է նաև հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկության բարեխիղճ տարածումը, այն է՝ ճշգրիտ և հուսալի տեղեկատվության տրամադրումն ու հասարակության տեղեկացված լինելու շահի գերակայությունը տեղեկություն հայտնած անձի վրա դրված պարտականության և պատասխանատվության համեմատ: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը, հիմնվելով Եվրոպական դատարանի՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի մասին նախադեպային իրավունքի վրա, սահմանել է, որ անձի արտահայտվելու ազատությունը կարող է սահմանափակվել, եթե միջամտությունը նախատեսված է օրենքով, ծառայում է Սահմանադրությամբ և Կոնվենցիայով թվարկված «իրավաչափ նպատակներից» առնվազն մեկին, տվյալ դեպքում՝ անձի «պատվի ու բարի

համբավի» կամ «հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելուն», և «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:[18]

Դատելով վերը նշվածից, գերակա հանրային շահի սկզբունքն ունի մի շարք անքակտելի բաղադրիչներ, որոնք ներկայացնում ենք ստորև:

6.1. Հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն

«Հանրային գերակա շահը» հաճախ պայմանավորված է տարածված տեղեկության բնույթից, մասնավորապես, թե արդյոք տեղեկությունը ներկայացնում է հանրային լայն հետաքրքրություն: Այս եզրույթը մեկնաբանվել է Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2293/02/10 գործով որոշման մեջ, ըստ որի հանրային գերակա շահը պայմանավորված է, նախ և առաջ, տվյալ հանգամանքների ներքո **հասարակության տեղեկացված լինելու** իրավունքի առկայությամբ: Եթե տվյալ տեղեկատվությունը ներկայացնում է հասարակական հետաքրքրություն և հնարավոր է ցույց տալ, որ տվյալ տեղեկատվությունը զգալիորեն անհրաժեշտ է հանրության համար, ինչպես նաև, որ հանրությունը շարունակաբար հետևել է այդ տեղեկությունների տարածման ընթացքին և սպասել դրանց հետագա հրապարակմանը, առկա է հանրային շահ տվյալ տեղեկատվության տարածման ու հանրության կողմից դրա ստացման առնչությամբ և այդ դեպքում ընդհանուրի այդ շահը կարող է գերակայել մասնավորի շահին:

ՀՀ սահմանադրական դատարանը սահմանել է, որ խոսքի ազատության և օրենքով պաշտպանվող այլ շահերի միջև հավասարակշռություն սահմանելիս հիշյալ ազատությունները միշտ պետք է գերակայեն այն դեպքում, երբ տեղեկության տարածումը վերաբերել է հասարակական հետաքրքրություն ներկայացնող դեպքերի[19]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ նման դեպքերում ազգային իշխանությունների հայեցողության շրջանակը սահմանափակված է ժողովրդավարական հասարակության շահով, որը կայանում է նրանում, որ մամուլին թույլատրվի կատարել «հասարակական վերահսկող օղակի» («watchdog») իր գործառույթը և տեղեկատվություն տարածել հասարակական հետաքրքրություն ներկայացնող լուրջ հարցերի վերաբերյալ: Ըստ Դատարանի դիրքորոշման՝ իրավակիրառական պրակտիկայում առաջին հերթին պետք է գնահատվի այնպիսի «անհետաձգելի հասարակական պահանջի» առկայության փաստը, որն ունակ է արդարացնել այդ միջամտությունը, եթե դա կատարվել է հավասարակշռված և բարեխղճորեն՝ առանց չարամիտ դիտավորության:

Սահմանադրական դատարանի այդ դիրքորոշումն արտահայտված է Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում: Դատարանը նշել է, որ զանգվածային լրատվության միջոցները կրում են հասարակական հետաքրքրություն ներկայացնող լուրջ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու պարտականություն՝ կատարելով «հասարակական վերահսկող օղակի» (watchdog) գործառույթ, որին համապատասխանում է հասարակության՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը: Միաժամանակ, այլ անձանց վերաբերյալ արատավորող տեղեկատվության տարածումն արդարացված է այն դեպքում, երբ պայմանավորված է «անհետաձգելի հասարակական պահանջով»:[20]

---

[18] Վճռաբեկ դատարանի՝ Ալինա Նիկողոսյանի վերաբերյալ 03.06.2024 թիվ ԵԴ/16586/02/19 քաղաքացիական գործով որոշում, էջ 10:

[19] ՀՀ սահմանադրական դատարանի 2011թ. նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշում, 6-րդ կետ:

[20] Վճռաբեկ դատարանի՝ Ալինա Նիկողոսյանի վերաբերյալ 03.06.2024 թիվ ԵԴ/16586/02/19 քաղաքացիական գործով որոշում, էջ 11:

6.2. Հանրային բաց բանավեճ

Ընդհանուր հասարակական հետաքրքրություն ներկայացնող ցանկացած տեղեկատվություն, որը կոչված է խթանել այդ հարցի շուրջ հանրային բաց բանավեճ կամ լրացնում է արդեն ընթացքի մեջ գտնվող նման բանավեճի ծավալմանը, հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն է և անցնում է ազատ խոսքի հատուկ պաշտպանության տակ: Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ բոլոր այն դեպքերում, երբ լրագրողը (կամ որևէ այլ անձ) իր հայտարարություններով դուրս է գալիս հանրային բաց բանավեճի շրջանակներից ու այլևս հնարավոր չէ պնդել, որ արված հրապարակային արտահայտությունները ուղղված էին *«հասարակության համար կարևոր հարցերի բաց հանրային քննարկմանը»*, այդ պահից արտահայտվելու իրավունքը չի գերակայում տուժողի անհատական շահին, քանի որ նա դադարում է այլևս սպասարկել հանրային շահը և հանրային իրավահարաբերությունը այդտեղ արդեն դադարում է: Հետևաբար, կարևոր է հստակորեն ցույց տալը, թե արդյոք վիճահարույց հրապարակային հայտարարությունը (օրինակ՝ կոշտ քննադատությունը) կատարվել է հանրությանը հետաքրքրող հարցի շուրջ հանրային բաց բանավեճ ծավալելու կամ արդեն ծավալված բանավեճը լրացնելու նպատակով, թե՞ ոչ:

6.3. Հանրային հետաքրքրություն, թե՞ հանրային հետաքրքրասիրություն

Կարևոր է նկատի ունենալը, որ տեղեկատվությունը իրապես պետք է ներկայացնի հասարակական **հետաքրքրություն**: Հաճախ ընթերցողի **հետաքրքրասիրությունը** կամ հասարակության հետաքրքրասիրությունը որևէ երևույթի կամ անձի նկատմամբ սխալմամբ ներկայացվում է որպես հասարակական հետաքրքրության առարկա: Անհրաժեշտ է հստակորեն տարբերակել հասարակության հետաքրքրասիրության բավարարմանն ուղղված տեղեկատվությունը այն տեղեկատվությունից, որն ուղղված է խթանելու ընդհանուր հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ հանրային բաց բանավեճ կամ լրացնելու արդեն ընթացքի մեջ գտնվող նման բանավեճը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտնում է, որ հասարակական հետաքրքրասիրությունից այլոց իրավունքների և հեղինակության պաշտպանությունը առանձնակի կարևորություն է ստանում անձնական կյանքի մասին լուսանկարների տարածման առումով, քանի որ լուսանկարները կարող են պարունակել շատ անձնական կամ նույնիսկ ինտիմ տեղեկություն անձի կամ նրա ընտանիքի մասին: Ավելին, «սենսացիոն» մամուլում կամ «սիրային» ամսագրերում տեղ գտնող լուսանկարները, որոնք սովորաբար նպատակ են հետապնդում բավարարել հասարակության հետաքրքրասիրությունը անձի խիստ անձնական կյանքի մանրամասների վերաբերյալ, հաճախ արվում են անձին շարունակաբար հետապնդելու մթնոլորտում, որը կարող է անձի մոտ առաջացնել իր անձնական կյանք ներխուժման կամ նույնիսկ հետապնդման առավել ուժեղ զգացում: Եվրոպական դատարանը գտնում է, որ նման պարագայում մամուլի՝ ժողովրդավարության մեջ «հանրային պահապանի» դերակատարումը նվազ կարևորություն ունի, ու չնայած որոշակի հատուկ հանգամանքներում տեղեկացված լինելու հասարակության իրավունքը կարող է նույնիսկ ընդգրկել հանրային գործիչների անձնական կյանքի որոշ կողմեր, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է քաղաքական գործիչներին, այդ իրավաչափ անհրաժեշտությունը կբացակայի (չնայած շահագրգիռ անձի հանրաճանաչությանը), երբ հրապարակված լուսանկարները և ուղեկցող մեկնաբանությունները վերաբերեն բացառապես անձի մասնավոր կյանքին և բացառապես հասարակության՝ դրա հետ կապված **հետաքրքրասիրության**

բավարարման նպատակով: Այդ դեպքում արտահայտվելու ազատությունը կարիք կլինի ավելի նեղ մեկնաբանել[21]:

6.4. Քաղաքական խոսք և քաղաքական գործիչներ

Քաղաքական բանավեճերի[22] ազատությունը կազմում է ցանկացած ժողովրդավարության հիմքը: Այդ իմաստով քաղաքական խոսքը գտնվում է հատուկ պաշտպանության տակ: Հետևաբար, եթե հրապարակված խոսքը կամ լրատվական նյութը վերաբերում է քաղաքական իրադարձություններին, թույլատրելի քննադատության շրջանակները շատ ավելի լայն են: Նմանապես, թույլատրելի քննադատության շրջանակները ավելի լայն են քաղաքական գործիչների, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններիս, քաղաքական գործիչների արարքները և որոշումները ենթական են հանրային վերահսկողության և բաց են հանրության կողմից քննարկման համար:

Հենց այս իմաստով, նրանք պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան, քան սովորական քաղաքացիները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց անձնական իրավունքներն օբյեկտիվորեն ունեն խախտվելու առավել մեծ ռիսկայնություն, քան մասնավոր անձանց իրավունքները, քանի որ հասարակական և քաղաքական գործունեությամբ զբաղվող անձանց գործունեությունն առավել քան հրապարակային է, որն էլ իր հերթին ենթադրում է առավել մեծ հանդուրժողականություն: Նմանատիպ գործերի շրջանակներում գնահատող դատողություններն ունեն պաշտպանության առավել բարձր աստիճան և որոշակի առանձնահատկություններ ունեցող կատեգորիա են, քանի որ դրանք առնչվում են ոչ թե մասնավոր անձանց, այլ՝ հանրային լայն գործունեությամբ զբաղվող անձանց իրավահարաբերություններին: Վերջին հանգամանքն էլ, ըստ էության, որոշիչ դերակատարում ունի վիրավորանքի և զրպարտության գործերում՝ խոսքի ազատությունը որպես գերակա դիտարկելու հարցում:[23]

7. Ողջամիտ հրապարակում

Ողջամիտ հրապարակման սկզբունքը ամրագրված է 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում՝ միայն զրպարտության մասով, համաձայն որի անձն ազատվում է զրպարտության համար պատասխանատվությունից, եթե հիմնավորի, որ բացի նրանից, որ տվյալ տեղեկատվությունը իր բովանդակությամբ պայմանավորված էր հանրային գերակա շահով, ողջամտության սահմաններում ձեռնարկել էր միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները:

Ողջամիտ հրապարակման սկզբունքը ներկրվել է միջազգային իրավունքից, մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-

---

[21] *Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի* (2), թիվ 40660/08, 60641/08, ՄԻԵԴ, 07/02/2012, կետեր 103 և 110:

[22] *Օզգյուրլյուքն Վե Դայանիշման Փարթիսի (ՕԴՖ) ընդդեմ Թուրքիայի*, թիվ 7819/03, ՄԻԵԴ, 10/05/2012, կետ 28:

[23] Ալինա Նիկողոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 03.06.2024 թիվ ԵԴ/16586/02/19 քաղաքացիական գործով որոշում, էջ 12:

րդ մասի մեկնաբանությունից, ըստ որի արտահայտվելու ազատության իրավունքն իրացնելիս լրագրողները պարտավոր են ապահովել այդ դրույթում նշված «պարտավորությունները և պատասխանատվությունը», որը ենթադրում է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդիրների ու իրադարձությունների մասին լուսաբանելիս լրագրողները պարտավոր են **գործել բարեխղճորեն՝ տրամադրելու համար ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն՝ լրագրողական էթիկայի նորմերին համապատասխան»:** [24] Դա նշանակում է, որ նույնիսկ զրպարտող բնույթի տեղեկատվությունը չի կարող հիմք հանդիսանալ լրագրողին պատասխանատվության ենթարկելու համար, եթե լրագրողը հոդվածը նախապատրաստել ու հրապարակել է բարեխղճորեն, հավասարակշռված, հանրային շահի նպատակով՝ հետևելով լրագրողական էթիկական կանոններին: Այս սկզբունքը, փաստորեն, թույլ է տալիս լրագրողին սխալվել, բայց խուսափել պատասխանատվությունից, եթե վերջինս հիմնավորի, որ, առաջին, գործել է բարեխղճությամբ և լրագրողական վարքագծի նորմերի պահպանմամբ, երկրորդ, ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

Ըստ մեկ այլ մեկնաբանության, «ողջամիտ հրապարակում» իրավական պաշտպանության սկզբունքը գործում է, եթե հիմնավորվում է, որ ցանկացած այլ անձ լինելով լրագրողի փոխարեն և ցանկացած այլ հանգամանքներում տվյալ լրատվանյութը կտարածեր նույն կերպ, ինչպես դա արել էր տվյալ լրագրողը[25]:

Տեղեկության ճշմարտացիությունը ստուգելու պահանջի կատարված լինելը պետք է գնահատվի հրապարակման պահի դրությամբ: Եթե հետագայում (օրինակ՝ դատական վարույթում) պարզվի, որ տեղեկությունը չի համապատասխանել իրականությանը, մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ լրագրողը ողջամտության շրջանակներում ձեռնարկել էր բոլոր հնարավոր միջոցները տեղեկատվության ճշմարտացիությունը հրապարակման պահի դրությամբ ստուգելու համար, այդ փաստը ինքնին չի կարող պատասխանատվության հիմք հանդիսանալ: Տեղեկատվությունը ստուգված լինելու պահանջի կատարված լինելը պետք է գնահատվի այդ տեղեկությունը ստանալու պահին տիրող իրավիճակի դրությամբ, այլ ոչ թե հետին հայացքով:

Վերը նկարագրված սկզբունքները, ընդհանուր առմամբ, բխում են ՄԻԵԴ նախադեպային իրավունքից և կոչված են պաշտպանելու լրագրողական ազատությունը այն դեպքերում, երբ տեղեկատվության հրատապությունը պահանջում է որքան հնարավոր է արագ տարածել տեղեկությունը և հապաղումը կարող է նվազեցնել լրատվանյութի կարևորությունը: Նման պայմաններում նույնիսկ փորձված լրագրողը կարող է սխալվել, սակայն դա չի նշանակում, որ պետք է պատասխանատվության ենթարկել լրագրողին, եթե տվյալ հանգամանքների ներքո նա ամեն ինչ արել էր տեղեկատվության ճշգրտությունը ստուգելու նպատակով:

Սահմանադրական դատարանը նույնպես անդրադարձել է նշված սկզբունքին՝ հստակորեն առանձնացնելով երկու պայմաններ. **բարեխղճությունը** և տուժողի հեղինակությանն ու պատվին վնաս պատճառելու **դիտավորության** բացակայությանը: Ըստ Սահմանադրական դատարանի՝ նույն տրամաբանության վրա է կառուցված նաև 1087.1-րդ հոդվածի 10-րդ մասը, որն անձին ընդհուպ զրկում է նյութական

[24] Տե՛ս այս սկզբունքի ամրագրումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝. *Գոլոմբանին ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 51279/99, ՄԻԵԴ, 25/06/2002թ վճռում, կետ 65:

[25] Զրպարտության Սահմանումը. Արտահայտվելու ազատության և հեղինակության պաշտպանության սկզբունքները: «Արտիկլ 19» հասարակական կազմակերպություն. Հուլիս 2000, սկզբունք 9: (Defining Defamation: Principles on Freedom of Expression and Protection of Reputation)

փոխհատուցում պահանջելու հնարավորությունից, եթե նա մինչև դատարան դիմելը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում և (կամ) իր պատասխանի հրապարակում, և լրատվական գործունեություն իրականացնողը կատարել է այդ պահանջը:[26]

Բարեխիղճ հրապարակում» սկզբունքին անդրադարձել է նաև Տեղեկատվական վեճերի խորհուրդը իր հրապարակած մի շարք կարծիքներում:[27]

8. Մինչդատական կամ դատական վարույթներում կատարված հրապարակային արտահայտություններ

Անձն ազատվում է զրպարտության համար պատասխանատվությունից նաև այն դեպքում, եթե վիճահարույց արտահայտությունը տեղ է գտել մինչդատական վարույթի ընթացքում (օրինակ, քրեական գործով նախաքննության ընթացքում) կամ դատական քննության ընթացքում (օրինակ, դատարանի դահլիճում հրապարակայնորեն ասված խոսք): Այս սկզբունքը ամրագրված է 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում:
Նույն պայմանները վերաբերում են նաև այնպիսի արտահայտություններին, որոնք տեղ են գտել մինչդատական կամ դատական փուլում ներկայացված ապացույցներում (օրինակ, վկայի գրավոր ցուցմունքում, փորձագետի եզրակացությունում կամ որևէ տեսաերիզում): Այդ պայմանները հավասարապես կիրառելի են քրեական, քաղաքացիական և վարչական դատավարությունների նկատմամբ:

Կարևոր է նկատելը, որ հոդվածի տառացի իմաստից հետևում է, որ փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը զրպարտություն չի որակվում, եթե այն **նույնությամբ** ելնում է մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունից կամ ներկայացրած ապացույցներից: Հետևաբար՝ երբ վարույթի մասնակիցը վարույթի ընթացքում կատարում է այնպիսի հրապարակային արատավորող արտահայտություններ, որոնք չեն բխում վարույթի նյութերից, վարույթի մասնակիցը չի կարող օգտվել այս կանոնի պաշտպանությունից:[28]

9. Հրապարակային ելույթից, պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթերից բխող արտահայտություններ

Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով սահմանվում է, որ փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե անձի հրապարակային արտահայտությունները մեկ այլ անձի մասին **բխում** են վերջինիս կողմից իր հրապարակային ելույթում, պատասխանում կամ նրանից ելնող փաստաթղթում հնչեցրած մտքերից: Այս սկզբունքը նման է 3.1. բաժնում նշված «Ստույգ փաստ կամ հայտարարության ճշմարտացիություն» իրավական պաշտպանության միջոցից:

---

[26] Սահմանադրական դատարանի ՍԴՈ-997 որոշում, տե՛ս բաժին-7-ում:
[27] Տե՛ս, օրինակ, Տեղեկատվական վեճերի խորհրդի թիվ 74 և թիվ 75 որոշումները:
[28] Վճռաբեկ դատարանի՝ Քրիստինե Մխիթարյանի վերաբերյալ թիվ ԼԴ/3335/02/17 քաղաքացիական գործով 14.06.2024թ. որոշում:

«Բխել» բառը մեկնաբանում է *որպես «հրապարակային ելույթում կամ պատասխանում կամ փաստաթղթում տեղ գտած եզրահանգումների կամ փաստերի բարեխիղճ շարադրանք»*: **«Փաստաթուղթ»** բառը մեկնաբանվում է լայնորեն՝ ներառելով կրիչի ցանկացած տեսակի օգտագործմամբ կատարված գրառումներ՝ էլեկտրոնային հաղորդագրման ցանկացած տեսակ, լուսապատճեն և այլն: **«Ելույթ»** բառը մեկնաբանվում է որպես հնչեցրած բանավոր խոսք, որը նպատակ ունի որոշակի տեղեկատվություն հասու դարձնել անորոշ թվով անձանց և արվում է այնպիսի հրապարակային միջոցառումների ժամանակ, ինչպիսին են, օրինակ, կոնֆերանսները, համաժողովները, հավաքները, հանրահավաքները, և այլն[29]:

10. Տեղեկատվության վերարտադրում

Անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար նախատեսվող պատասխանատվությունից, եթե բառացիորեն կամ բարեխղճորեն վերարտադրել է (արտատպել է) այլ աղբյուրի հեղինակած հայտարարությունը, և դա անելիս նշել է աղբյուրի մասին: Այս սկզբունքը սահմանված է 1087.1-րդ-րդ հոդվածի 6-րդ մասում, ու սա կարևոր սկզբունք է լրագրողների, լրատվամիջոցների՝ հատկապես ժամանակակից տեխնոլոգիաներով գործող լրատվական ագրեգատորների համար, որոնք լրատվական նյութը ավտոմատ կերպով հավաքում են բաց աղբյուրներից ու վերահասցեագրում, վերահրապարակում են սպառողների համար:

Կարևոր է, որ տեղեկության վերարտադրումը կատարվի **բառացիորեն** կամ չփոխվի ինչպես տեղեկության **ամբողջական իմաստը**, այնպես էլ կոնկրետ փաստերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Եթե տեղեկատվության վերարտադրումը չի կատարվել բառացիորեն կամ բարեխիղճ կերպով, այլ կերպ ասած՝ հրապարակողը փոփոխություններ է մտցրել տեղեկատվության մեջ, ավելացրել է, հանել կամ փոփոխել փաստերը (շարադրանքը կամ դրա առանձին մասերը), վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվություն է կրում հրապարակողը (վերարտադրողը)՝ ինչպես վերևում նշված այն դեպքում, երբ հրապարակողը վկայակոչում է անանուն, չնույնականացվող աղբյուր:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ եթե նույնիսկ տեղեկատվություն հրապարակողը հրապարակել է տեղեկատվության բովանդակությունը բառացի կամ բարեխիղճ կերպով, և հղում է կատարել աղբյուրին, չի ազատվում պատասխանատվությունից, եթե դատավարության ընթացքում կապացուցվի, որ նա գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ զրպարտություն լինելու մասին, քանի որ նման դեպքում անձի մոտ առկա է զրպարտելու դիտավորությունը: Այս դեպքում ինչպես տեղեկատվությունը կրող աղբյուրը, այնպես էլ այդ տեղեկատվությունը հրապարակողը կրում են համապարտ պատասխանատվություն որպես համատեղ վնաս պատճառողներ[30] (տե՛ս նաև 1.2.3. ենթաբաժնում:

Բառացի կամ բարեխիղճ վերարտադրության շրջանակում կարևոր է ուշադրություն դարձնել 1087.1 հոդվածի 6-րդ մասում սահմանված երկու՝ «աղբյուր» և «բարեխղճորեն»

[29] Վճռաբեկ դատարանի՝ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի վերաբերյալ թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով որոշում, էջ 9: Տե՛ս նաև Տեղեկատվական վեճերի խորհրդի թիվ 25 կարծիքը, որում Խորհուրդը եզրահանգել է, որ լրագրողի կողմից հոդվածում օգտագործված արատավորող արտահայտությունները այլ անձի մասին բխում էին վերջինիս հրապարակային ելույթներից ու գործողություններից:

[30] Նույն տեղում:

եզրույթների իրավական բովանդակությանը, որոնց վերաբերյալ դիտարկումները ներկայացվում են ստորև։

10.1. Տեղեկատվության աղբյուրը

Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/2293/02/10 և թիվ ԼԴ/0749/02/10 որոշումներում մանրամասնորեն մեկնաբանել է տեղեկատվության աղբյուր հասկացությունը։ Ըստ նշվածի, տեղեկատվության աղբյուր են **հեղինակները** և **լրատվական գործակալությունները,** որոնք **ֆիզիկական** կամ **իրավաբանական** անձինք են, որոնք հրապարակում են տեղեկատվություն որոշակի **միջոցներով**։

«Հեղինակը» պետք է լինի կոնկրետ ու իրական ֆիզիկական կամ իրավաբանական անձ։ Այնպիսի վերացական արտահայտություններ, ինչպիսին են, օրինակ, «ըստ շրջանառվող լուրերի», «ըստ մեր աղբյուրների», չեն կարող համարվել տեղեկատվության օրինական աղբյուրներ։ Անանուն, չնույնականացվող տվյալներով ֆիզիկական կամ իրավաբանական անձինք նույնպես օրինական աղբյուր չեն։ Օրինակ, այդպիսիք են սոցիալական ցանցերում կամ, ընդհանրապես, ինտերնետ տիրույթում գործող անանուն օգտատերերը։ Այս արգելը սահմանված է 1087.1 հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությամբ, համաձայն որի *«լրատվական գործունեություն իրականացնողը չի ազատվում վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից և կրում է փոխհատուցման պարտավորություն, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները «Զանգվածային լրատվության մասին» օրենքով սահմանված չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության վերարտադրությունն են՝ անկախ այդ չնույնականացվող աղբյուրին հղում կատարելու հանգամանքից»։* Դա նշանակում է, որ չնույնականացվող աղբյուրից վերարտադրված տեղեկության համար պատասխանատվության է ենթարկվում այդ տեղեկությունը տարածողը։ Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ տեղեկատվության աղբյուրը կամ հեղինակը հանդես է գալիս անանուն եղանակով կամ կեղծ անհատական տվյալներով, դատավարության սուբյեկտը, պատասխանատվություն կրողը դառնում է այդ տեղեկատվության տարածողը՝ հրապարակողը, արտատպողը կամ վերարտադրողը)։

Այս սկզբունքը ամրագրված է նաև 1087.1-րդ հոդվածի 9-րդ կետում, համաձայն որի զրպարտության կամ վիրավորանքի համար պատասխանատվությունը կրում է հրատարակողը, եթե «տեղեկատվության աղբուրը (հեղինակը) հայտնի չէ»։

Այս սկզբունքը սահմանված նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում, համաձայն որի



«…հրապարակող անձը չի ազատվում պատասխանատվությունից … նաև այն դեպքում. երբ … թեև վերարտադրում է տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ շարադրանքը, այդուհանդերձ հղում է կատարում մի աղբյուրի, որը չի համարվում «տեղեկատվության աղբյուր» ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ-րդ հոդվածի իմաստով, այն է՝ չի հանդիսանում հեղինակ կամ լրատվական գործակալություն … [նման դեպքում] տեղեկատվություն հրապարակողն ինքն է համարվում զրպարտող կամ վիրավորող »[31]:

[31] Վճռաբեկ դատարանի՝ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի վերաբերյալ թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով 27/04/2012թ որոշում, էջ 15։

Միևնույն ժամանակ, երբ տեղեկատվության աղբյուրը՝ հեղինակը հայտնի է և լրատվական գործունեություն իրականացնողը բացահայտել է նրա անձը, լրատվական գործունեություն իրականացնող անձը փոխհատուցման պարտավորությունը կրել չի կարող: Այդ պարտավորությունը կարող է կրել, կախված կոնկրետ գործի հանգամանքներից, կամ լրագրողը, կամ վիրավորանք թույլ տված կամ զրպարտություն կատարած անձը:[32]

Օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ տեղեկատվության աղբյուրին պետք է հղում կատարել **հրապարակելու պահին:** Ըստ Վճռաբեկ դատարանի՝ *«բովանդակային առումով տեղեկատվության աղբյուրի բացահայտումը պետք է կատարվի տեղեկատվությունը տարածելու հետ միաժամանակ»* [33] *:* Վճռաբեկ դատարանը դա բացատրում է այն անհրաժեշտությամբ, որ տեղեկատվության հասցեատերը պետք է տեղեկության տարածման պահին իրազեկ լինի տեղեկության աղբյուրի մասին, որը կարող է լինել ոչ թե անմիջական հրապարակողը, այլ որևէ այլ սուբյեկտ: Եթե հրապարակման պահին հղում չի կատարվում աղբյուրին, 1087.1-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն զրպարտության կամ վիրավորանքի համար պատասխանատվությունը կրում է հրապարակողը՝ ինչպես անանուն կամ կեղծ աղբյուրների դեպքում: Նույնիսկ, եթե հրապարակողը հետագայում, օրինակ, դատական քննության փուլում բացահայտի աղբյուրը, դա չի ազատում հրապարակողին պատասխանատվությունից:

10.2. Տեղեկատվական աղբյուրը չբացահայտելու իրավունքը

Տեղեկատվական աղբյուրը չբացահայտելը հրապարակողի իրավունքն է: Ինչպես նշվեց, հրապարակողը պետք է նկատի ունենա, որ աղբյուրը չբացահայտելու իրավունքից օգտվելիս իր վրա է վերցնում պատասխանատվության բեռը, իսկ հետագայում աղբյուրը բացահայտելը չի ազատում նրան պատասխանատվությունից՝ ինչպես նշվեց վերևում:

Տեղեկատվական աղբյուրի գաղտնիությունը, հատկապես կարևոր է լրագրողների համար: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակում հստակորեն սահմանված է լրագրողների աղբյուրների գաղտնիության իրավունքը, որի վերաբերյալ ձևավորվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունք: Եվրոպական դատարանը գտնում է, որ լրագրողներն իրենց գործունեության ընթացքում շատ հաճախ օգտվում են տեղեկատվության այնպիսի աղբյուրներից, որոնք ցանկանում են գաղտնի մնալ՝ ահազանգելով իրենց հաստատություններում տեղի ունեցող ապօրինությունների մասին ու այդ առումով արտահոսված տեղեկությունն օգտագործելը կարևոր նշանակություն կարող է ունենալ լրագրողի աշխատանքի արդյունավետության համար, եթե լրագրողը երաշխավորի աղբյուրի գաղտնիությունը: Դրանից հետևում է, որ նման պաշտպանության բացակայության պարագայում տեղեկատվության աղբյուրները կդադարեն մամուլին աջակցելուց, ինչն էլ բացասաբար կանդրադառնա հասարակությանը ստույգ և վստահելի տեղեկատվություն տրամադրելու մամուլի

[32] Վճռաբեկ դատարանի՝ Դավիթ Բեգլարյանի վերաբերյալ թիվ ՍԴ1/0530/02/18 քաղաքացիական գործով 08.02.2023թ. որոշումը, էջ 4:

[33] Վճռաբեկ դատարանի՝ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի վերաբերյալ թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով 27/04/2012թ որոշում, էջ 15, 5-րդ պարբ.:

հնարավորության վրա: Արդյունքում, կխաթարվի մամուլի, որպես հասարակության շահերի պաշտպանի կենսականորեն կարևոր դերը:[34]

ՀՀ օրենսդրությունում այս իրավունքը սահմանված է Զանգվածային լրատվության մասին օրենքի 5-րդ հոդվածով, ըստ որի լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, որոնք երեքն են: Դրանք առավել որոշակիորեն մեկնաբանվել են Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1234 որոշմամբ, ըստ որի տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահը գերակա կարող է ճանաչվել այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ այն դեպքերում, երբ, առաջին, աղբյուրի բացահայտումն անհրաժեշտ է անձի կյանքի պաշտպանության համար, երկրորդ, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունը կանխելու համար, երրորդ, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու համար: Որպես հավելյալ երաշխիք, տեղեկատվական աղբյուրի պաշտպանության պահանջը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ:

10.3. Տեղեկատվության տրամադրման «միջոց» հասկացությունը

Տեղեկատվության «աղբյուրը» ոչ միայն պետք է լինի իրական, այլ նաև տեղեկությունը տրամադրի կոնկրետ եղանակով՝ «միջոցներով»:

«Միջոցներ» եզրը լայն է մեկնաբանվում և ընդգրկում է հրապարակային ելույթներ, պաշտոնական փաստաթղթեր, հեղինակային ստեղծագործություններ, նկարներ, ֆիլմեր, արվեստի այլ ստեղծագործություններ, հեռարձակման բոլոր միջոցները և էլեկտրոնային տեղեկատվական համակարգերը, զանգվածային լրատվության միջոցները, համացանցային տեխնոլոգիաները, հեռահաղորդակցության բոլոր միջոցները, էլեկտրոնային տեղեկատվական համակարգերը[35], և այլն: Ցանկը սպառիչ չէ և կարող է ընդգրկել շարունակ զարգացող նոր տեխնոլոգիաները: Օրինակ, այդպիսի նոր տեխնոլոգիաներ են համացանցային միջնորդ ծառայությունները, որոնց միջոցով տրամադրվում է տեղեկությունների հոսքի համար անհրաժեշտ հարթակներ, որոնցից օգտվում են օգտատերերը ներբեռնելով կամ վերբեռնելով տեղեկություններ: Այդպես են աշխատում, օրինակ, սոցիալական ցանցերը, համացանցում փոխակտիվ համացանցային առևտրային ծառայություններ մատուցող ընկերությունները, caching, հոսթային կամ դոմենային ծառայություններ մատուցող կազմակերպությունները, և այլն:

Ներկայումս զարգանում է այն ուղղությունը, որ համացանցային միջնորդ ծառայությունները Օրենսգրքի 1087.1 հոդվածի իմաստով հանդիսանում են տեղեկատվության հոսքի «միջոցներ», հետևաբար, նրանք կարող են կրել պատասխանատվություն կամ համապարտ պատասխանատվություն աղբյուրի գործողությունների համար՝ հատկապես, եթե աղբյուրները չնույնականացվող են:

---

[34] *Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 17488/90, ՄԻԵԴ, 27/03/1996, կետ 39:

[35] Վճռաբեկ դատարանի՝ Բորիս Աշրաֆյանի վերաբերյալ թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով 27/04/2012թ. որոշում, էջ 10:

11. Երրորդ կողմի գրառումները

Եթե առցանց լրատվամիջոցը իր կայքում հրապարակել է հոդված, որի ներքո կայքի այցելուները կատարել են վիրավորական կամ զրպարտող գրառումներ, լրատվամիջոցը պատասխանատվություն չի կրում այդ գրառումների համար, ինչպես նաև չի կրում պարտավորություն դրանք հեռացնելու համար, եթե տուժողը մինչև դատարան դիմելը նախօրոք չի ծանուցել լրատվամիջոցին այդ գրառումների մասին և չի պահանջել դրանք հեռացնել կայքից: Այսինքն, այլոց գրառումների համար պատասխանատվությունը ծագում է այն պահից, երբ լրատվամիջոցը ծանուցվել է գրառումները հեռացնելու մասին: Սա իրավական պաշտպանության սկզբունք է, որը կոչվում է «Ծանուցել և հեռացնել» (Notice and take down action), որը լայնորեն կիրառվում է մի շարք երկրների ներպետական պրակտիկայում, ինչպես նաև միջազգային իրավունքում: Ներկայումս այդ սկզբունքը փոխարինվում է «ծանուցել ու գործել» (Notice and Action) սկզբունքով, որի տարբերությունը առաջինից նրանում է, որ առցանց հարթակներից պահանջվում է առավել լայն գործողությունների շրջանակ, քան միայն բովանդակությունը հեռացնելը: Այս մեխանիզմն ընկած է ԵՄ-ի «Թվային ծառայությունների ակտի» հիմքում, որի շրջանակում փոխակտիվ համացանցային ծառայություններ մատուցող սոցիալական ցանցերը, առևտրային հարթակները, ինտերնետ հաղորդակցության ծառայություն մատուցող օպերատորները և այլ համացանցային միջնորդները պարտավոր են ոչ միայն ծանուցում ստանալուն պես հեռացնել բովանդակությունը, այլև այդ մասին տարածել հայտարարություն, եթե բովանդակությունը ատելության խոսք է, պարբերաբար վերանայել հարթակի անվտանգության մեխանիզմները, պարբերաբար ներկայացնել հաշվետվություններ և զեկույցներ ԵՄ-ի վերահսկող վարչական մարմնին (համակարգավորման մոդելի շրջանակում), և բազմաթիվ այլ գործողություններ:

ՀՀ-ում այս սկզբունքը սահմանված չէ օրենսդրությունում ու դրա վերաբերյալ բացակայում է որևէ նախադեպային որոշում կամ դատական պրակտիկա: Այդուհանդերձ, դատական պրակտիկայում դատարանները հաճախ են կայացրել համացանցային բովանադակության արգելափակման կամ հեռացման մասին որոշումներ՝ որպես հայցի ապահովման միջոց կամ վճիռներ՝ որպես իրավական պաշտպանության միջոց): Օրինակ, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը թիվ ԵԿԴ/2491/02/11 քաղաքացիական գործով 07.03.2012թ. վճռով որոշել է, որ առցանց լրատվամիջոցին առանց նախօրոք ծանուցելու դատական կարգով երրորդ անձանց գրառումները լրատվամիջոցի կայքից արգելափակելը լրատվամիջոցի տեղեկություններ տարածելու իրավունքի այնպիսի միջամտություն է, որն «անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում»:

«Ծանուցել և հեռացնել» սկզբունքի համար ելակետային է **իրազեկված** լինելու հանգամանքը, որը կատարվում է, երբ լրատվամիջոցը ծանուցվում է: Իրազեկված լինելու պայմանը կարող է բավարարված լինել նաև, եթե հայցվորը հիմնավորի, որ լրատվամիջոցը բավարար չափով **վերահսկում** է իր հարթակում երրորդ անձանց, ընթերցողների գրառումների դաշտը, հոսքը, որով կարող է հիմնավորվել, որ լրատվամիջոցը չէր կարող տեղյակ չլինել գրառումների դաշտում անօրինական բովանդակության առկայության մասին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Դելֆին ընդդեմ Էստոնիայի [36] գործով հայտնի վճռում հստակեցրեց «Ծանուցել և հեռացնել» սկզբունքի շրջանակը՝ սահմանելով, որ առցանց լրատվամիջոցների մոտ այլոց գրառումները հեռացնելու պարտականությունը անվերապահորեն, առանց ծանուցելու, ծագում է այն դեպքում, եթե գրառումը ատելության խոսք է, իսկ մնացած բոլոր դեպքերում (երբ գրառումը վիրավորանք կամ զրպարտություն է) գործում է «ծանուցել և հեռացնել» սկզբունքը, և գրառումը հեռացնելու պարտականությունը ծագում է լրատվամիջոցի տեղեկացված, իրազեկված լինելու պահից:

Հայաստանի ԶԼՄ-ների Էթիկայի Դիտորդ Մարմինը լրատվամիջոցների ու լրագրողների համար մշակել է Դելֆի-ի գործով վճռի մեկնաբանման ու կիրառման ուղեցույց, որում հանգամանալից մեկնաբանված է Եվրոպական դատարանի վճիռը:

12. Գույքային վիճակ

Վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվության եղանակը և դրամական չափը որոշելիս դատարանները, որպես էական հանգամանք պարտավոր են հաշվի առնել պատասխանողի գույքային վիճակը: Այս պահանջը ամրագրված է 1087.1-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետում:

Այս պահանջի նպատակն է համաչափության ընդհանուր սկզբունքի կիրառումը ապահովելը, որպեսզի պատասխանողը անհարկի ծանր կամ անհաղթահարելի գույքային բեռի տակ չհայտնվի: Եթե պատասխանողը լրագրող է կամ լրատվամիջոց, դատարանները սահմանում են փոխհատուցման այնպիսի չափ, որպեսզի չխոչընդոտվի լրատվամիջոցի բնականոն աշխատանքը, տեղեկատվության բնականոն հոսքը, քանի որ վերջինս հանրային ընդհանուր շահ է ներկայացնում: Սովորական քաղաքացու առումով այս սկզբունքի կիրառումը պայմանավորված է քաղաքացուն անհարկի գույքային ծանր բեռի տակ դնելուց խուսափելու անհրաժեշտությամբ: Օրինակ, ՏԴ1/0177/01/11 քաղաքացիական գործով դատարանը հաշվի է առել պատասխանող ֆիզիկական անձի ցածր աշխատավարձը և վարձակալությամբ բնակվելու հանգամանքները, իսկ պատասխանող իրավաբանական անձի մասով՝ ընկերության վնասով աշխատելու և սնանկության եզրին գտնվելու հանգամանքները: Այս երկու հանգամանքները հաշվի առնելով դատարանը ամբողջությամբ մերժել է հայցվորի դրամական փոխհատուցման պահանջը և սահմանել, որ հնարավոր է հասնել հայցվոր ընկերության գործարար համբավին պատճառված վնասի վերականգնմանը ոչ նյութական (բարոյական) վնասի հատուցման եղանակով: Թիվ ԵԿԴ/0261/02/11 քաղաքացիական գործով դատարանը հաշվի է առել պատասխանողի լրատվամիջոցի՝ «թերթի ոչ մեծ տպաքանակը», «թերթի արժեքը» և «տեղեկատվության տարածման շրջանակը»: ԵԿԴ/2293/02/10 գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը առաջարկել է պատասխանողներից պահանջել նրանց եկամուտների վերաբերյալ պետական իրավասու մարմիններին ներկայացված ֆինանսական կամ այլ փաստաթղթեր, օրինակ, հարկային մարմիններին ներկայացված հարկային հաշվետվությունները:

[36] *Դելֆին ընդդեմ Էստոնիայի* (ՄՊ), թիվ 64569/09, ՄԻԵԴ, 16/06/2015թ.:

13. Ռազմավարական հայցեր ընդդեմ հանրային մասնակցության (SLAPP)

Երբեմն, վիրավորանքի կամ զրպարտության հիմքով հարուցվում են դատական գործեր ընդդեմ իրավապաշտպանների, ազդարարների, լրագրողների, բնապահպանների, հանրային նշանակության գործունեություն ծավալող այլ անձանց դեմ, որտեղ հայցվորների իրական նպատակը ոչ թե իրավական պաշտպանություն ստանալն է, այլ նման մարդկանց հասարակական գործունեությունը լռեցնելը: Նման հայցերը կոչվում են «ռազմավարական հայցեր ընդդեմ հանրային մասնակցության:[37] Նման հայցերը, որպես կանոն, հարուցվում են պետական մարմինների, քաղաքական գործիչների, քաղաքական կուսակցությունների, ինչպես նաև խոշոր մասնավոր ձեռնարկատիրական կազմակերպությունների կողմից[38]: Նման դատավարությունները հետապնդում են կոնկրետ ռազմավարական նպատակ: Հայցվորները նախաձեռնում են դատական երկարատև, ձգձգվող գործընթացներ, որ պատասխանողները կրեն ֆինանսական վնասներ: Հայցվորները ներկայացնում են վնասի հատուցման խոշոր պահանջներ, ներկայացնում են տարբեր արգելանքներ կիրառելու մասին միջնորդություններ, որոնց բավարարման դեպքում պատասխանողները հայտնվում են անելանելի վիճակում, իսկ հաճախ էլ ստիպված են լինում դադարեցնել իրենց գործունեությունը կամ էապես նվազեցնել իրենց ակտիվությունը դատական գործերի ճնշման ներքո: SLAPP դատական գործերը մեծամասամբ հարուցվում են վիրավորանքի, զրպարտության, գործարար համբավի վնասման, հեղինակային իրավունքի խախտման, մասնավոր կյանքի միջամտության իրավական հիմքերով:

Հայաստանի Հանրապետությունում նույնպես արձանագրվել են նման դատական գործընթացներ, որոնց շրջանակում ներկայացվել են հայցեր ընդդեմ լրագրողների և իրավապաշտպանների, ու նման հայցերը հիմնականում ներկայացվել են պետականն մարմինների, քաղաքական կուսակցությունների, խոշոր հանքարդյունահանման ձեռնարկությունների կողմից:

Քանի որ նման դատական գործընթացները մեծ վնաս են հասցնում ժողովրդավարությանը, միջազգային մարմինների կողմից ընդունվում են իրավական ու քաղաքական հանձնարարականներ այս երևույթին հակազդելու ուղղությամբ: 2024 թվականի ապրիլի 5-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ընդունեց «Հանրային մասնակցության դեմ ուղղված ստրատեգիական դատական հայցերին հակազդելու (SLAPPs) CM/Rec(2024)2 հանձնարարականը» ԵԽ Անդամ Պետություններին, որում նման դատավարությունները սահմանված են որպես *«իրավական գործողություններ, որոնք սպառնում են, նախաձեռնվում կամ իրականացվում են որպես թիրախին հետապնդելու կամ վախեցնելու միջոց, և որոնք նպատակ են հետապնդում կանխել, արգելակել, սահմանափակել կամ պատժել հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերում ազատ արտահայտվելու և հանրային մասնակցության հետ կապված իրավունքների իրացումը»*: Հանձնարարականով առաջարկվում է ԵԽ Անդամ Պետություններին իրենց ներպետական օրենսդրություններում նախատեսել SLAPP-երի կանխարգելման իրավական մեխանիզմներ: Օրինակ, առաջարկվում է ներպետական օրենսդրությամբ

[37] Անգլերեն՝ Strategic Litigation Against Public Participation (SLAPP)):

[38] Հաճախ նման հայցերը հարուցվում են հանքարդյունահանման ձեռնարկությունների կողմից բնապահպանության խնդիրներով զբաղվող քաղաքացիական ակտիվիստների դեմ: Հայաստանում նույնպես գրանցվել են նման դատական գործեր:

սահմանել դատավարական հիմքեր նման դատավարությունները դատաքննության նախնական փուլում արագորեն կարճելու, հայցվորի կողմից հայցի առարկան փոփոխելու արգելքի մասին: Հանձնարարականով նաև առաջարկվում է սահմանել պատասխանողների դատական ծախսերը հատուցելու, ապացուցման բեռը բացառապես հայցվորների վրա սահմանելու և այլ երաշխիքներ, որոնք կբարձրացնեն SLAPP հայցեր ներկայացնելու ռիսկերը, որի արդյունքում կնվազեն նման հայցեր ներկայացնելու հնարավորությունները: Առաջարկվում է նաև սահմանել «SLAPP-ի զոհ»-ի իրավական հատուկ կարգավիճակ կոնկրետ անձանց համար՝ դրանից բխող իրավական բարենպաստ հետևանքներով (տե՛ս Հանձնարարականի 14-րդ կետում):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը վիրավորանքի ու զրպարտության գործերի քննության հատուկ կարգ չի սահմանում: Բոլոր հայցերը քննվում են ընդհանուր կարգով: Մինչդեռ, SLAPP դատավարությունների թիվը Հայաստանում աճում է: Նման գործերով դատարանները դատական հայցերը քննում են ընդհանուր կարգով՝ առանց խորամուխ լինելու պատասխանողների պնդումների մեջ, որ ներկայացված հայցերի իրական նպատակը ոչ թե իրավական պաշտպանություն հայցելն է, այլ իրենց հանրային գործունեությունը ճնշելը: Դատարանները նման պնդումները, որպես կանոն, համարում են հիմնազուրկ՝ մատնանշելով ուղղակի փաստերի և ապացույցների բացակայությունը: Առկա կարգավորումները հնարավորություն չեն տալիս դատավարության սկզբում հայցը մերժել այն հիմնավորմամբ, որ հայցը հետապնդում է քողարկված այլ նպատակ: Նույնիսկ, եթե հայցն ակնհայտորեն անհիմն է, դատարանները պարտավոր են իրականացնել ամբողջ ծավալով քննություն: ՀՀ օրենսդրությունում բացակայում են ակնհայտորեն անհիմն, իրավունքի չարաշահմամբ ու անձանց հանրային գործունեություն վնասելու քողարկված հիմքով շինծու դատական հայցեր ներկայացնելու համար հայցվորներին պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքեր:

Եթե վիրավորանքի կամ զրպարտության հիմքով հարուցվել է SLAPP դատական գործ, դատական քննության ընթացքում անհրաժեշտ է բարձրաձայնել այդ մասին ու դատական հայցը վիճարկել խտրականության արգելքի մասին օրենսդրական, սահմանադրական նորմերի հիմքերով, քանի դեռ օրենսդրությամբ չեն սահմանվել իրավական հիմքեր «Ռազմավարական հայցեր ընդդեմ հանրային մասնակցության» դատավարությունների կանխարգելման մասին՝ ի կատարումն Եվրոպայի խորհրդի վերը նշված հանձնարարականի:

14. Ատելության խոսքի արգելք

Վիրավորանքի ու զրպարտության հիմքերով դատական վարույթներում կարող է հանդիպել իրավիճակ, երբ կողմը վիճարկում է այնպիսի արտահայտություն, որն իր իրավական բովանդակությամբ ատելության խոսք է, որը թեև ինքնին վիրավորանք կամ զրպարտություն է, սակայն դրա իրավական հիմքերը տարբեր են, ու դա պահանջում է առավել արագ արձագանք, առավել խիստ պատասխանատվության միջոց ու առավել բարձր հատուցման չափ:

Ի տարբերություն վիրավորանքի ու զրպարտության, ատելության խոսքը արգելվում է բացարձակապես: Դա նշանակում է, որ նման խոսքը հնարավոր չէ փոխհավասարակշռել այլ իրավունքների ու շահերի, օրինակ, տեղեկություններ

ստանալու հանրային շահի, այլ անձի անձնական արժանապատվության նկատմամբ հարգանքի, հրապարակային հայտարարություն կատարած անձի տեղեկություններ ու գաղափարներ տարածելու իրավունքի հետ՝ ինչպես արվում է վիրավորանքի կամ զրպարտության դատական գործերով Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակում: Ատելության խոսքը ենթակա չէ իրավական պաշտպանության, ու բացակայում է որևէ նպատակ ու հիմք, որը կարող է արդարացնել ատելության խոսքի օգտագործումը:

Երկրորդ, ատելության խոսքի իրավական հատկանիշները տարբերվում են վիրավորանքից կամ զրպարտությունից նրանով, որ ատելության խոսքն ասվում է ատելության շարժառիթով՝ պայմանավորված անձի սեռով, ազգությամբ, ռասսայով, տարիքով, կրոնական համոզմունքներով, և այլ հատկանիշներով, որոնք սահմանված են Սահմանադրության 29-րդ հոդվածում: Ի տարբերություն դրա, զրպարտության համար չի պահանջվում ապացուցել որևէ դիտավորության առկայություն, իսկ վիրավորանքը, թեև պահանջում է հիմնավորել, որ արվել է դիտավորությամբ, սակայն դրա շարժառիթը ոչ թե կոնկրետ հատկանիշով պայմանավորված ատելությունն է, այլև ցանկացած այլ պատճառ: Այլ կերպ նշվում է, որ ատելության խոսքի կամ ատելության շարժառիթով հանցագործության դրդապատճառը անձի սեռով, ռասայով կամ խտրականության արգելքի որևէ հատկանիշով պայմանավորված նախապաշարմունքն է, որը ծնում է իռացիոնալ ատելություն: Վերը նշվածից բխում է, որ ցանկացած ատելության խոսք ինքնին վիրավորանք է, մինչդեռ ցանկացած վիրավորանք ինքնին ատելության խոսք չէ:

Ատելության խոսքն այն աստիճանի լուրջ իրավախախտում է, որ դրա համար պահանջվում են իրավական պաշտպանության առավել խիստ միջոցներ: Քանի որ սույն ուղեցույցը քաղաքացիական պատասխանատվության մասին է, ատելության խոսքի համար ոչ նյութական վնասի չափը ավելի մեծ պետք է լինի, քան վիրավորանքի ու զրպարտության համար, իսկ իրավական պաշտպանության այլ միջոցները, օրինակ, բովանդակության արգելափակման կամ հեռացման վերաբերյալ հայցի ապահովման միջոցները, պետք է կիրառվեն անհապաղ ու առավել արագորեն: Ավելին, ԵՄ Թվային ծառայությունների ակտով պահանջվում է, որ այն առցանց հարթակները, որոնք տարածել են ատելության խոսք, պարտավոր են ոչ միայն հեռացնել այդ խոսքը, այլև տարածել հայտարարություն՝ հրապարակայնորեն ընդունելով, որ հարթակից տարածվել է ատելության խոսք և ներողություն խնդրեն հասարակությունից:

Ատելության խոսքի առավել վտանգավոր տեսակների համար նախատեսվում է քրեական պատասխանատվություն, իսկ առավել մեղմ տեսակների համար, որոնք վտանգում են հասարակական կարգը, սակայն չեն ներկայացնում հասարակական մեծ վտանգ, կարող է նախատեսվել նաև վարչական պատասխանատվություն: Իսկ քաղաքացիաիրավական (մասնավոր) հարաբերություններում ատելության խոսքի համար նախատեսվում են քաղաքացիական պատասխանատվության միջոցներ:

Հայաստանի Հանրապետությունում ատելության խոսքը սահմանված է միայն Քրեական օրենսգրքում (հոդվածներ 329 և 330): Վարչական և քաղաքացիական օրենսդրություններում բացակայում են ատելության խոսքի արգելքի մասին նորմեր: Ավելին, բացակայում է նաև խտրականության արգելքի վերաբերյալ ինքնուրույն, համապարփակ օրենք: Դա զրկում է քաղաքացիներին իրավական պաշտպանության արդյունավետ հնարավորություններից: Դա է պատճառը, որ ատելության խոսքի դեմ իրավական պաշտպանության միջոց հայցելիս քաղաքացիները հաճախ ստիպված են դատական հայց ներկայացնել Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիմքով՝

վիրավորանքի կամ զրպարտության ներքո: Մինչդեռ, ինչպես նշվել է վերևում, 1087.1 հոդվածը չի տրամադրում արդյունավետ իրավական կառուցակարգ՝ ատելության խոսքից պաշտպանվելու համար:

Այդուհանդերձ, մինչ օրենսդրությունը կհամալրվի խտրականության և ատելության խոսքի արգելքի մասին իրավական նորմերով, Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը մնում է դեռ միակ հիմքը, որով հնարավոր է հայցել քաղաքացիաիրավական պաշտպանություն ատելության խոսքից: Նշված հոդվածի հիմքով դատական հայց ներկայացնելիս կամ արտադատական կարգով որևէ անձի կամ կազմակերպությանը դիմելիս (օրինակ՝ հերքման պահանջով ԶԼՄ-ին դիմելիս) անպայման պետք է նշել, որ վիրավորական արտահայտությունը ատելության խոսք է, քանի որ արվել է ատելության շարժառիթով՝ մատնացույց անելով ատելության շարժառիթի հիմքը (սեռ, ռասա, ազգություն, քաղաքացիություն, և այլն): Այնուհետև, կարելի է պահանջել հատուցման առավելագույն եղանակ և չափ՝ նյութական ու ոչ նյութական, այդ թվում ատելության խոսք տարածելու համար հրապարակային ներողություն խնդրելը և հայտարարությունը հեռացնելը: Ատելության խոսքի համար անհարիր և անհամարժեք միջոց կլինի, եթե, օրինակ, ԶԼՄ-ն առաջարկի Զանգվածային լրատվության մասին օրենքի 8-րդ հոդվածի հիմքով հանդես գալ պատասխանի իրավունքով՝ հրապարակելով պատասխանը: Ատելության խոսքն այն աստիճան լուրջ իրավախախտում է, որ իրավական պաշտպանության միջոցները պետք է կիրառվեն աներկբայորեն, առանց նախապայմանների:

Եթե դուք ատելության խոսքի իրավախախտումը վիճարկեք Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիմքով ու ձեր դատավարական հակառակորդը կամ դատարանը հակադրվեն ձեզ առ այն, որ այդ հոդվածը վերաբերելի չէ, քանի որ չի հանդիսանում ատելության խոսքի համար իրավական պաշտպանության հիմք, դուք կարող եք վկայակոչել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մինասյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի վճիռը, որում Եվրոպական դատարանը գտել է, որ այդ հոդվածը կարող է, առնվազն տեսականորեն, հանդիսանալ իրավական պաշտպանության միջոց դատարանների կողմից ատելության խոսքը վիրավորանք համարելու համար՝ այդ հոդվածի 2-րդ կետի հիմքով:[39]

[39] Տե՛ս, օրինակ, *Մինասյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի*, թիվ 59180/15, ՄԻԵԴ, 07/01/2025, կետ 64:

ԲԱԺԻՆ 2. ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼԸ ԵՎ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Եթե գտնում եք, որ դարձել եք վիրավորանքի կամ զրպարտության զոհ և ցանկանում եք պաշտպանել ձեր արժանապատվությունը օրենքով սահմանված միջոցներով, մինչև դատարան դիմելը անհրաժեշտ է որոշակի քայլերի իրականացում, որը կօգնի հասկանալ կոնկրետ դեպքում դատարանում ձեր հաջողության հասնելու հավանականությունը։

1. Առաջին քայլը, որը պետք է անել, պարզելն է, թե արդյոք հայտարարությունը կատարվել է հրապարակային եղանակով։ Իրավունքների պաշտպանության կարող եք դիմել, երբ արտահայտությունը հրապարակվել է համացանցում, ներկայացվել է որևէ անձի հրապարակային ելույթում, զանգվածային լրատվության միջոցներով և այլ երրորդ կողմին հասու հարթակներով։ Հետևաբար, անձնական հեռախոսազրույցներում, էլեկտրոնային կամ փոստային նամակագրությամբ ներկայացված փաստացի տվյալները և արտահայտությունները չեն կարող համարվել հրապարակային, եթե առնվազն երրորդ անձ հաղորդակից չի դարձվել այդ նամակագրությանը։ Նմանապես, առանց առնվազն երրորդ անձի ներկայությամբ արված հայտարարությունը նույնպես չի համարվի հրապարակային։ Եթե հայտարարությունը կատարվել է հրապարակային եղանակով, դուք ունեք օրենքով սահմանված պաշտպանության միջոցներ, իսկ եթե արտահայտությունը, հայտարարությունը հրապարակային եղանակով չի արվել, դուք վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ իրավակարգավորումներով իրավունքների պաշտպանության միջոցներ չունեք, սակայն կարող եք դատական հայց ներկայացնել տարածված տեղեկություններն իրականությանը չհամապատասխանող ճանաչելու վերաբերյալ պահանջով՝ Քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով։

2. Ձեր հաջորդ քայլը պետք է լինի որոշելը, թե վիճահարույց արտահայտությունը համարում եք վիրավորանք է, թե՞ զրպարտություն։ Սա կարևոր է, քանի որ վիրավորանքը և զրպարտությունը տարբեր հասկացություններ են, հետևաբար, իրավական պաշտպանության մեխանիզմներն էլ տարբեր են։ Ուստի, դրանք պետք է միմյանցից տարանջատել։ Հիմնականում այս երկու հասկացությունները հեշտ է իրարից զանազանել։ Զրպարտությունը, որպես կանոն, անձին որևէ **գործողության** կատարման մեջ մեղադրող հայտարարություն է (օրինակ՝ «Ա-ն գողացել է իմ դրամապանակը»), իսկ վիրավորանքը պիտակ է, որևէ անձի սուբյեկտիվ **գնահատականը** մեկ այլ անձի մասին (օրինակ՝ Ա-ն ստահակ է»)։ Այդուհանդերձ, որոշ հանգամանքներում դժվար է զանազանել այս երկու հասկացությունները միմյանցից։ Այդ պատճառով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել բովանդակությանը, արդյո՞ք ձեզ հասցեագրված արատավորող արտահայտությունը ուղղված է բնութագրելու ձեզ (վիրավորանք), թե՞ ձեզ վերագրվում է այնպիսի գործողության կամ անգործության, որը արատավորում է ձեր պատիվը, արժանապատվությունը և բարի համբավը (զրպարտություն)։

3. Հաջորդիվ կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ արտահայտությունը ուղղված լինի անձամբ ձեզ։ Դուք չեք կարող դիմել դատարան այն հիմնավորմամբ, որ արատավորվել է ձեր ընկերության, կուսակցության, դպրոցի կամ ձեր կողմից

ղեկավարվող պետական կառույցի բարի համբավը, որքան էլ դա ուղղակի կամ անուղղակի առնչություն ունենա ձեր հետ: Հրապարակային խոսքը պետք է ուղղված լինի ձեզ, և միայն ձեր պատիվը և արժանապատվությունը արատավորելու նպատակի ենթադրությունը չի կարող հիմք հանդիսանալ, որ դիմեք դատարան:

4. Հաջորդ քայլը պետք է լինի պարզելը, թե տվյալ արտահայտությունը իր բնույթով արատավորող է, թե՞ ոչ: Սա կարևոր հանգամանք է, քանի որ անձի մասին բացասական իմաստ պարունակող ոչ բոլոր փաստացի հայտարարությունները կամ գնահատողական դատողություններն են ինքնին համարվում վիրավորական կամ զրպարտող: Եթե փաստացի հայտարարությունը կամ գնահատականը իր մեջ պարունակում է **այն աստիճանի** բացասական իմաստ, որ հավասարազոր է անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի **արատավորմանը**, այդ դեպքում տվյալ հայտարարությունը կբնութագրվի վիրավորական կամ զրպարտող: Այսինքն, արտահայտության արատավորող լինելը նվազագույն շեմ է կամ նախապայման, որի առկայության դեպքում միայն կարելի է պնդել, որ արտահայտությունը վիրավորական է կամ զրպարտող: Ինքնին բացասական խոսքը կամ քննադատությունը չի կարող համարվել արատավորող, ուստի կարևոր է, որ յուրաքանչյուր դեպքում պատասխանեք այն հարցին, թե արդյո՞ք կոնկրետ իրավիճակում արտահայտությունը կարող է համարվել հեղինակի ազատ խոսքի դրսևորում թե՞ ոչ:

5. Հաջորդիվ անհրաժեշտ է պարզել արտահայտության հեղինակին, այն անձին, ում դեմ պետք է ներկայացնել ձեր պահանջները: Նման հարցը, հատկապես կարևոր է, երբ արտահայտությունը կատարվել է համացանցում՝ սոցիալական ցանցի օգտատիրոջ կողմից, զանգվածային լրատվության միջոցի կողմից կամ այլ հարթակում: Անհրաժեշտ է պարզել, ով է հանդիսանում արտահայտության հեղինակը, քանի որ անկախ հարթակի պատկանելության, եթե հրապարակված է նյութի հեղինակի տվյալները, ձեր պահանջները պետք է ներկայացնեք այդ անձի դեմ: Սակայն կարող է պարզվել, որ հեղինակի տվյալները կեղծ են կամ անհնար է նույնականացնել նրան: Այս պարագայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերության ուժով պատասխանատվությունը կրում է այդ զանգվածային լրատվության միջոցը՝ անկախ հեղինակի մասին տվյալների առկայությունից կամ բացակայությունից: Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ վիճելի հոդվածը հրապարակվել է մի կայքում, որը շահագործող մեդիայի մասին տվյալները հայտնի չեն, ու այս պարագայում պետք է փորձեք ստանալ տեղեկություններ այդ կայքէջի դոմեյնային հասցեի գրանցորդի վերաբերյալ:

6. Հաջորդ քայլում պետք է համոզվեք, որ պահպանել եք պահանջ ներկայացնելու հայցային վաղեմության ժամկետները: Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն կարող եք իրավունքների պաշտպանության հայց ներկայացնել արտահայտություններին ձեզ հայտնի դառնալու պահից մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսյա ժամկետում: Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ եթե

արտահայտությունը տեղի է ունեցել համացանցում, ենթադրվում է, որ դրա մասին տեղեկացել եք դրա հրապարակմամբ, եթե այլ բան չեք ապացուցում:

7. Եթե պարզեցիք, որ հայտարարությունը պարունակում է վիրավորանք կամ զրպարտություն, որը արատավորում է ձեր արժանապատվությունը կամ գործարար համբավը, հաջորդ քայլը պետք է լինի որոշելը, թե իրավական պաշտպանության ո՞ր ճանապարհով եք ուզում առաջնորդվել: Կան երկու ուղղություններ. մինչդատական և դատական: Սրանք գործում են իրարից զատ և պայմանավորված չեն մեկը մյուսով: Դուք կարող եք ձեր հայեցողությամբ ընտրություն կատարելու այս երկու պաշտպանության միջոցների միջև: Մինչդատական եղանակով կարող եք նամակով դիմել տեղեկությունը տարածողին և պահանջել, որ նա հերքի տեղեկատվությունը (հերքման պահանջ) և/կամ հրապարակի ձեր պատասխանը (պատասխանի իրավունք): Կարող եք նաև խնդրել կատարել այնպիսի գործողություններ, որոնք սահմանված չեն օրենքով, քանի որ սա քաղաքացիաիրավական հարաբերություն է. օրինակ, ներողություն խնդրելը: Այնքանով, որքանով դուք ոչ թե **պահանջում** եք, այլ **խնդրում**, դուք կաշկանդված չեք ներկայացնել մի խնդրանք, որը սահմանված չէ օրենքով և, նմանապես, հասցեատերը կաշկանդված չէ ընդունել և կատարել ձեր խնդրանքը, նույնիսկ եթե դա չի բխում օրենքից, քանի որ քաղաքացիաիրավական հարաբերություններում առաջնայինը իրավահարաբերությունների մասնակիցների կամքն է:

8. Եթե անձը մինչև դատարան դիմելը Զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում և (կամ) իր պատասխանի հրապարակում, և լրատվական գործունեություն իրականացնողը **կատարել է այդ պահանջը,** անձը չի կարող դրանից հետո դիմել դատարան, իսկ եթե դիմի դատարան, նրա դիմումը կմերժվի: Այս սահմանափակումը սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 10-րդ մասում: Նշված սահմանափակման իմաստը նրանում է, որ անձը չօգտվի իրավական պաշտպանության միաժամանակ երկու հնարավորություններից, ինչը պատասխանող կողմին (օրինակ՝ լրատվամիջոցին) կդնի անհամաչափորեն ծանր բեռի տակ: Եթե անձը ստացել է հերքման կամ պատասխանի հնարավորություն, համարվում է, որ նա արդեն ստացել է իրավական պաշտպանության արդյունավետ և համարժեք միջոց՝ նա վերականգնել է իր խախտված իրավունքը: Եվ, հետևաբար, կարիք չկա նրան տրամադրել պաշտպանության հավելյալ հնարավորություն՝ դրամական փոխհատուցում հայցելու միջոցով, որի արդյունքում պատասխանող լրատվամիջոցը կարող է հայտնվել կրկնակի բեռի տակ:

Հերքման և/կամ պատասխանի իրավունքը և դրանց իրականացման կարգը սահմանվում է Զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում:

1. Հերքում

Հերքման պահանջ հնարավոր է ներկայացնել ինչպես արտադատական, այդպես էլ դատական կարգով: Հերքման և (կամ) պատասխանի հրապարակման պահանջը արտադատական կարգով ներկայացնելու դեպքում այն ենթակա է մերժման, եթե պահանջը ներկայացվել է անանուն է կամ հակասում է օրինական ուժի մեջ մտած

դատական ակտին: Հերքման պահանջը պետք է ներկայացվի մեկամսյա ժամկետում, որը հաշվվում է այն տեղեկատվության տարածման օրվանից, որին վերաբերում է հերքումը:

Լրատվական գործունեություն իրականացնողը հերքման պահանջը ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, պարտավոր է հերքման պահանջը ներկայացնողին տեղեկացնել հերքումը տարածելու ժամանակի մասին կամ գրավոր հայտնել հերքման տարածման պահանջը մերժելու մասին: Հերքումը պետք է իրականացվի «Հերքում» խորագրի ներքո: Տեղակայման, ձևավորման, տառատեսակի չափի ու տեսակի, հաղորդման ժամի առումով հերքումը չպետք է զիջի այն տեղեկատվությանը, որին վերաբերում է: Եթե հերքման տեքստը չի համապատասխանում օրենքով սահմանված պայմաններին՝ տեղակայման եղանակը, ֆորմատը, չափը, տեսակը, հաղորդման ժամը, և այլն, հերքման պահանջի կատարումը համարվում է խախտված:

Եթե վիճահարույց հոդվածում հրապարակվում է նաև հոդվածի հասցեատիրոջ մերժողական պատասխանը, այդ հանգամանքը չի կարող հետագայում ներկայացվել որպես հերքման կամ պատասխանի պահանջի բավարարում:

Հերքման պահանջի հետ անձն իրավունք ունի պահանջել նաև իր պատասխանի հրապարակումը: Լրատվական գործունեություն իրականացնողը կարող է պատասխանի հրապարակումը զուգակցել կամ չզուգակցել հերքումով:

Հերքման պահանջը բավարարված է համարվում, եթե լրատվական գործունեություն իրականացնողը հրապարակել է պատասխան:

Դատական կարգով իրավունքների պաշտպանություն իրականացնելիս հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ հերքման պահանջը պետք է համապատասխանի սույն գլխով սահմանված չափանիշներին: Դատարանից չեք կարող պահանջել հերքման մեջ ներառել ոչ վերաբերելի հանգամանքներ, օրինակ՝ Հերքման պահանջում հնարավոր չէ սահմանել ներողություն խնդրելու, հասցված վնասը ընդունելու և փոխհատուցելու պատրաստակամության մասին հայտարարություններ:

Գործնականում հերքման պահանջը համարվում է ոչ գույքային (ոչ նյութական) փոխհատուցման միջոց և ամենատարածված իրավունքների պաշտպանության ձևն է զրպարտության վերաբերյալ գործերով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զրպարտությամբ հասցվում է անձին ոչ գույքային վնաս, առաջնահերթորեն դրա փոխհատուցումը տեղի է ունենում ոչ գույքային եղանակով՝ հերքման հրապարակմամբ:

Սահմանադրական դատարանը 2024թ. հոկտեմբերի 1-ին կայացված թիվ ՍԴՈ-1752 որոշմամբ հերքման մասին նշել է հետևյալը.

«… Սահմանադրական դատարանը հայտնում է, որ պետք է գործեն անհրաժեշտ կազմակերպական այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կապահովեն անձի նկատմամբ իրականությանը չհամապատասխանող և նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալների (statement of fact) ներկայացման պայմաններում (անկախ դրանք ներկայացրած սուբյեկտի) դրանք հրապարակայնորեն հերքելու և (կամ) դրանց վերաբերյալ իր պատասխանը հրապարակելու և (կամ) դրանք հեռացնելուն պարտավորեցնելու հնարավորությունը, քանզի նման հնարավորության բացակայությունը հակասում է Սահմանադրության 31 և 75-րդ հոդվածներին»:

Վերոգրյալով պայմանավորված օրենսդրական այն նորմը, որի համաձայն հերքման պահանջ կարող է ներկայացվել միայն զանգվածային լրատվության միջոցում այն հրապարակված լինելու դեպքում, Սահմանադրական դատարանի հիշատակված

որոշմամբ հակասահմանադրական է ճանաչվել: Հետևաբար, **հայցադիմում ներկայացնելուց դուք կարող եք պահանջել հերքում նաև այն դեպքում, եթե արատավորող արտահայտությունները հրապարակվել են սոցիալական ցանցում կամ այլ առցանց հարթակում:**

2. Պատասխանի իրավունք

Պատասխանի հրապարակման պահանջը կարող է ներկայացվել արտադատական կարգով՝ զանգվածային լրատվության միջոցին: Դատական կարգով Պատասխանի հրապարակման պահանջը իրականացնելու հնարավորությունը օրենսդրությամբ սահմանված չէ, սակայն նաև առկա չէ դրա վերաբերյալ որևէ արգելք, որի պարագայում գործում է կանոնը, որ դուք կարող եք անել այն, ինչ օրենքով արգելված չէ:

Պատասխանի հրապարակման պահանջի վրա տարածվում են նույն կանոնները, որոնք սահմանված են հերքման պահանջի հրապարակման համար: Պատասխանը պետք է վերաբերի միայն պատասխանի առարկա տեղեկատվության մեջ տեղ գտած փաստացի անճշտություններին: Այն չպետք է պարունակի պատասխանի առարկա տեղեկատվությունը պատրաստած կամ տարածած անձի, ցանկացած այլ անձի կամ նրանց գործունեության քննադատություն, եթե դա ուղղակիորեն կապված չէ այդ տեղեկատվության հետ:

Պատասխանի ծավալը չպետք է գերազանցի պատասխանի առարկա տեղեկատվության ծավալը: Եթե պատասխանի առարկա տեղեկատվությունը բազմաբովանդակ նյութի ամբողջ ծավալից հստակ սահմանազատվող ինքնուրույն, առանձին հատված է, պատասխանի ծավալը չպետք է գերազանցի այդ հատվածի ծավալը: Պատասխանը պետք է հրապարակվի անվճար:

3. Հայցային վաղեմություն

Իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության միջոցի դիմելու ժամանակահատվածը կոչվում է հայցային վաղեմության ժամկետ (տես՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածը):

Դատարանն իր նախաձեռնությամբ իրավասու չէ կիրառել հայցային վաղեմության ժամկետ: Դատարանն իրավունքի պաշտպանության մասին պահանջը պետք է քննության ընդունի հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ:

Դատարանը հայցային վաղեմությունը կարող է կիրառել միայն հայցով՝ պատասխանողի միջնորդությամբ: Միջնորդությունը պետք է ներկայացվի մինչև գործով ապացուցման պարտականության բաշխումը, դրանից հետո ներկայացված միջնորդությունները քննության ենթակա չեն: Հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը պետք է տրվի միայն առաջին ատյանի դատարանում և առաջին անգամ գործի քննության ընթացքում, ինչպես նաև վերադաս դատարաններում: Վճիռը բեկանելուց և առաջին ատյանի դատարանում նոր քննության շրջանակներում նման դիմում ներկայացնելու դեպքում այն կմերժվի: Գործի նոր քննության ժամանակ չի կարող ներկայացվել հայցային վաղեմություն կիրառելու մասին գրավոր միջնորդություն, բացառությամբ այն դեպքերի, երբ միջնորդություն ներկայացնողն առաջին ատյանի դատարանում գործի նախորդ քննության ընթացքում իրենից անկախ պատճառներով զրկված է եղել հայցային վաղեմության ժամկետի

լրացած լինելը վկայակոչելու հնարավորությունից: Այս խնդրին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է, ի թիվս այլոց՝ ԼԴ/0749/02/10 գործովորոշման մեջ, եզրահանգելով, որ թեև պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն չի ներկայացրել Դատարանում [առաջին ատյանի] գործի քննության ընթացքում, սակայն զրկված չի եղել Դատարանում նման միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից, քանի որ հայցային վաղեմության ժամկետի խախտման մասին դիրքորոշում հայտնել է վերաքննիչ և վճռաբեկ բողոքներում:

Զրպարտության և վիրավորանքի հայցային վաղեմության ժամկետը մեկ ամիս է՝ այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքի կամ զրպարտության մասին, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում: Սա նշանակում է, որ անկախ անձին՝ իրեն վիրավորելու կամ զրպարտելու մասին հայտնի դառնալու պահից, եթե հրապարակումից անցել է վեց և ավելի ամիս ժամանակ՝ դատարանը հայցը պետք է մերժի, եթե պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու միջնորդություն է ներկայացրել:

Պատասխանողի կողմից հայցային վաղեմության ժամկետ կիրառելու միջնորդություն ներկայացված լինելու պարագայում պետք է պարզել այն փաստը (տես՝ ապացուցման պարտականության բաշխման կանոնները), թե հայցվորը, երբ է **իմացել** իր իրավունքի հնարավոր խախտման մասին, քանի որ իմանալու պահից անմիջապես հետո սկսվում է հայցային վաղեմության ժամկետի հոսքը (տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1558(ՎԴ) քաղաքացիական գործով 12/12/2007թ. որոշումը, ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի ԵԿԴ 2374/02/10 գործով[40], ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ՇԴ/1469/02/11/ գործով[41] վճիռները, որոնցում հայցերը մերժվել են հայցային վաղեմության ժամկետի խախտման՝ հայցային վաղեմության 1-ամսյա ժամկետը բաց թողնելու հիմքով, արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումները.

«Գործի քննությամբ հայցվոր կողմը իր պահանջի հիմքում չի դրել հանգամանք այն մասին, որ «Խմբագիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից հրատարակվող www.report.am էլեկտրոնային լրատվական միջոցով 31.08.2010թ.-ին տպագրված «Իրավունքի» իրավունքը Հայկ Բաբուխանյանի թրի ծայրին է» հոդվածի մասին իրեն հայտնի է դարձել ավելի ուշ, քան տպագրված նյութի օրը, ինչի պատճառով էլ հայցվոր կողմը՝ պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության համար դատարան է դիմել 11.11.2010թ.-ին, բաց թողնելով օրենքով նախատեսված մեկ ամսվա ժամկետը:

Ուստի, դատարանը գտնում է, հայցվորների կողմից բաց է թողնվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ մասով նախատեսված մեկ ամսվա ժամկետը՝ պատվի,

[40] ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ Հայկ Բաբուխանյանը և «Իրավունք Մեդիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ «Խմբագիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և Էդիկ Անդրեասյանի՝ պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության պահանջի մասին ԵԿԴ/2374/02/10 քաղաքացիական գործով 27.02.2012թ վճիռը:

[41] ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Արման Մինասի Ավետիսյանն ընդդեմ Լևոն Ալբերտի Բարսեղյանի՝ թիվ ՇԴ/1469/02/11 քաղաքացիական գործով 11.06.2012թ վճիռ:

արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության պահանջով իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելու համար»:

Տե՛ս նաև հետևյալ մեջբերումը.

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ նշված հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության պահանջով դատարան հայց ներկայացնելու մեկամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքի կամ զրպարտության մասին, իսկ նույն հոդվածով սահմանված վեցամսյա ժամկետը՝ դա առավելագույն այն ժամկետն է, որի դեպքում կարող է հայց հարուցվել դատարան վիրավորանքի կամ զրպարտության պահից: Այսինքն՝ տվյալ դեպքում անհրաժեշտ են վերը նշված երկու ժամկետների միաժամանակյա առկայությունը՝ նախ վիրավորանքի կամ զրպարտության մասին հայցվորի իմանալու պահից չպետք է անցած լինի մեկ ամսից ավել ժամանակ, և վիրավորանքի կամ զրպարտության պահից չպետք է անցած լինի վեց ամսից ավել ժամանակ: Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով նախատեսված հայցային վաղեմության ժամկետը լրացել է, քանի որ հայցը դատարան է ներկայացվել վիրավորանքի կամ զրպարտության մասին իմանալու պահից մեկ ամսից ավել ժամանակ անցնելուց հետո, իսկ վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամիս ժամկետը լրացած չլինելու հանգամանքը չի կարող արգելք հանդիսանալ հայցային վաղեմություն կիրառելու համար»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով սահմանված է միայն վաղեմության ժամկետի տևողությունը, իսկ այս իրավահարաբերություններին բնորոշ այլ կանոնակարգումները՝ որպես ընդհանուր բնույթի նորմեր, սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 21-րդ գլխում, ինչպես նաև դրանց նկատմամբ կիրառելի են դատական ակտերով իրավադրույթներին տրված մեկնաբանությունները: Որպես օրինակ՝ հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը հայցվորի միջնորդության հիման վրա կարող է դատարանի կողմից հարգելի համարվել: Այս միջնորդությունը, բնականաբար, կարող է հարուցվել, եթե պատասխանողի կողմից դատարանին ներկայացվել է պահանջ՝ վաղեմության ժամկետը բաց թողնելու հիմքով հայցը մերժելու մասին և, եթե հայցվորն ընդունում է, որ իր կողմից բաց է թողնվել վաղեմության ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը սահմանում է, որ բացառիկ դեպքերում՝ ծանր հիվանդություն, անօգնական վիճակ, անգրագիտություն և այլն, հայցային վաղեմության ժամկետի բացթողումը դատարանը կարող է հարգելի ճանաչել, վերականգնել հայցային վաղեմության ժամկետը և քննության առնել հայցի բովանդակությունն ու լուծում տալ վեճին: Ընդ որում, թվարկված **բացառիկ դեպքերը սպառիչ չեն** և հայցվորի կողմից ներկայացված փաստը, որպես բացառիկ դեպք գնահատելու լիազորությունը թողնված է դատարանին՝ համոզիչ պատճառաբանությամբ լուծելուն:

Վճռաբեկ դատարանը թիվ ԵՄԴ/2775/02/14 քաղաքացիական գործով 2016թ. հուլիսի 22-ի որոշմամբ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը.



«… ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետը հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբը պայմանավորում է անձի՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին տեղեկացված լինելու պահով:: … Վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով անձն իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը պաշտպանելու համար դատարան կարող է դիմել վիրավորանքի կամ զրպարտության մասին տեղեկանալուց հետո մեկ ամսվա ընթացքում, ընդ որում, միայն այն դեպքում, եթե վիրավորանքի կամ զրպարտության պահից չի անցել վեց ամսից ավելի: Այլ կերպ ասած՝ մեկամսյա ժամկետը պետք է ընդգրկված լինի վեցամսյա ժամկետի մեջ: … վեցամսյա ժամկետի բացթողնման դեպքում անձը զրկվում է դատարան դիմելու հնարավորությունից: Ինչ վերաբերում է մեկամսյա ժամկետին, այն ենթակա է վերականգնման վերը նշված հիմքերի առկայության դեպքում»:[42]

Վճռաբեկ դատարանի հիշատակված որոշմամբ **իրավադարեցնող է ճանաչվել վեցամսյա ժամկետի խախտմամբ ներկայացված հայցի քննությունը**, որից բխում է, որ որևէ կերպ հնարավոր չէ այդ ժամկետը վերականգնել: Հայցադիմումում ներկայացնելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ հայցադիմումը պետք է ներկայացնել մեկամսյա ժամկետում այն պահից, երբ տեղեկացել եք կամ չէիք կարող տեղեկացած չլինել ձեր պատիվը, արժանապատվությունը կամ բարի համբավը արատավորող դեպքի մասին:

4. Դատարան դիմելու կարգը

4.1. Հայցի առարկան

Անձի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելուն և վերականգնելուն ուղղված հայցի առարկան կարող է ներառել 1087.1-րդ հոդվածով սահմանված հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը.

1) հրապարակայնորեն ներողություն խնդրել: Ներողություն խնդրելու ձևը սահմանում է դատարանը.
2) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը: Հրապարակման եղանակը և ծավալը սահմանում է դատարանը.
3) մինչև 3 միլիոն դրամի չափով փոխհատուցում վճարել:

Զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն

[42] Վճռաբեկ դատարանի՝ Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի թիվ ԵՄԴ/2775/02/14 քաղաքացիական գործով 22.07.2016թ. որոշում, էջ 5:

հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

2) մինչև 6 միլիոն դրամի չափով փոխհատուցում վճարել:

Այս պահանջները պետք է տարանջատված լինեն, որպեսզի դյուրին լինի դրանց ապացուցման պարտականությունը կատարելը՝ թե՛ հայցվորի և թե՛ պատասխանողի համար:

Անհրաժեշտ է ճիշտ հաշվարկել պետական տուրքի չափը, հակառակ պարագայում հայցադիմումը ենթակա է վերադարձման: Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/30706/02/20 քաղաքացիական գործով 2024թ. փետրվարի 8-ին կայացված որոշմամբ անդրադարձել է ներկայացվող պահանջների և դրան համապատասխան պետական տուրք վճարելու հարցին, նշելով, որ դատական պաշտպանության ոչ նյութական եղանակների իրականացման միջոցների ներքո պետք է հիմք ընդունել ինչպես այն հարթակները, որոնցում անձն ակնկալում է ներողության, դատարանի վճռի, հերքման տեքստի կամ իր պատասխանի հրապարակում, օրինակ՝ ինտերնետային, այդ թվում նաև՝ սոցիալական կայքեր, զանգվածային լրատվության միջոցներ, հանրամատչելի այլ աղբյուրներ, այնպես էլ հրապարակման ծավալի և ձևի մասին հստակեցումները, օրինակ՝ քանակ, եղանակ, ժամ, տառաչափ, հասանելիություն, վերնագիր, տեքստի բովանդակություն, շեշտադրումներ և այլն: Հետևաբար՝ դատական պաշտպանության ոչ նյութական եղանակների համար գանձման ենթակա պետական տուրքի չափը որոշելու հարցում առանցքային է ոչ թե այն հարցի պարզումը, թե որքան միջոցներով է իրականացվում դատական պաշտպանության համապատասխան ոչ նյութական եղանակը, այլ՝ դատական պաշտպանության համապատասխան ոչ նյութական քանի եղանակ է ընտրել այն հայցող անձը:

Վճռաբեկ դատարանը նաև նշել է, որ անձի պատվին, արժանապատվությանը և (կամ) գործարար համբավին պատճառված վնասի հատուցման գործերով վճարման ենթակա պետական տուրքի գումարը ճիշտ հաշվարկելու և գանձելու համար դատարանները պետք է *իրավունքի պաշտպանության ոչ նյութական եղանակը* տարբերակեն *դրա իրականացման միջոցներից*՝ առաջնորդվելով այն կանոնով, որ օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը ենթակա է գանձման բացառապես իրավունքի պաշտպանության համապատասխան եղանակի համար՝ ելնելով դրա քանակից և ոչ թե դրա իրականացման միջոցից:

4.2. Զրպարտությունից պաշտպանվելու հայցի պահանջը

Զրպարտության դեպքում, որպես ներազդման միջոց, նախատեսված են երկուսը՝ *զրպարտություն համարվող տեղեկատվության հերքումը և ոչ նյութական վնասի դրամային հատուցումը:*

Բոլոր այն դեպքերում, երբ զրպարտության դեպքում հայցով կներկայացվի այլ պահանջ (բացառությամբ գույքային վնասի հատուցման պահանջից), օրինակ՝ ներողություն խնդրելու, քաղաքացիաիրավական պատասխանատվության այլ միջոց, ապա դա կլինի ոչ իրավաչափ ու դատարանն այդ պահանջը կմերժի: Իսկ դատարանի կողմից այդ պահանջը բավարարելու դեպքում՝ դա կլինի օրենքով չնախատեսված միջամտություն խոսքի ազատության իրավունքին: Այդպիսի միջամտությունը

կհանգեցնի սահմանադրորեն ամրագրված հիմնարար իրավունքի խախտման ու հիմք կհանդիսանա դատական ակտը բեկանելու համար[43]:

Հարկ է նշել, որ ոչ նյութական վնասի դրամական հատուցումը կարող է տեղի ունենալ միայն այն պարագայում, երբ ոչ նյութական փոխհատուցումը, հերքումը, բավարար չէ հասցված վնասը փոխհատուցելու համար: Հետևաբար՝ պետք է հայցադիմումում հիմնավորեք, ոչ միայն դրամական պահանջի չափի հիմնավորվածությունը, այլև դրա անհրաժեշտությունը:

Վճռաբեկ դատարանը թիվ ԼԴ/3335/02/17 քաղաքացիական գործով 2024թ. հունիսի 14-ին կայացված որոշմամբ անդրադարձել է փաստացի տվյալները զրպարտություն որակելուն, նշելով.

«Փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը զրպարտություն չի որակվում, եթե այն նույնությամբ ելնում է մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունից կամ ներկայացրած ապացույցներից: Հետևաբար՝ հրապարակային ներկայացված փաստացի տվյալը չի կարող լինել տուժողի վարքագծի կամ խոսքի վերաբերյալ զրպարտություն կատարած անձի սուբյեկտիվ կամ օբյեկտիվ գնահատականը»:

Պաշտոնատար անձանց կողմից զրպարտության վերաբերյալ պահանջներ ներկայացվելու պարագայում կարևոր որոշում է կայացրել Վճռաբեկ դատարանը ԵԴ/16586/02/19 քաղաքացիական գործով 2024թ. հունիսի 3-ին կայացված որոշմամբ, որտեղ նշել է.

«... հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց անձնական իրավունքներն օբյեկտիվորեն ունեն խախտվելու առավել մեծ ռիսկայնություն, քան մասնավոր անձանց իրավունքները, քանի որ հասարակական և քաղաքական գործունեությամբ զբաղվող անձանց գործունեությունն առավել քան հրապարակային է, որն էլ իր հերթին ենթադրում է առավել մեծ հանդուրժողականություն: Նմանատիպ գործերի շրջանակներում գնահատող դատողություններն ունեն պաշտպանության առավել բարձր աստիճան և հանդիսանում են որոշակի առանձնահատկություններ ունեցող կատեգորիա, քանի որ դրանք առնչվում են ոչ թե մասնավոր անձանց, այլ՝ հանրային լայն գործունեությամբ զբաղվող անձանց իրավահարաբերություններին: Վերջին հանգամանքն էլ, ըստ էության, որոշիչ դերակատարում ունի վիրավորանքի և զրպարտության գործերում՝ խոսքի ազատությունը որպես գերակա դիտարկելու հարցում»:

Վճռաբեկ դատարանը նաև անդրադարձել է պաշտոնատար անձանց դեմ վիրավորանքի և զրպարտության գործերով հայցադիմում ներկայացնելու հարցին: Մասնավորապես Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/15836/02/20 քաղաքացիական գործով 2023թ. օգոստոսի 23-ին կայացված որոշմամբ նշել է.

«Պետությունը՝ ի դեմ իր պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, չի կարող համարվել վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձ, չի կարող հանդիսանալ վիրավորանքի միջոցով վնաս

[43] Վճռաբեկ դատարանի՝ Մարգարիտա Խաչատրյանի վերաբերյալ ԵԿԴ/0807/02/11 քաղաքացիական գործով 04.07.2013թ որոշում:

պատճառելու հետևանքով առաջացող հարաբերության սուբյեկտ՝ վնաս պատճառող, քանի որ վերջինիս ուղղված հայցապահանջը վերաբերելի չէ պետությանը՝ ի դեմս որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի: Հետևաբար՝ կարգավիճակից բխող առանձնահատկությունից ելնելով՝ սույն գործով ՀՀ վարչապետը չի կարող հանդես գալ որպես անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը պաշտպանելու հայցով պատասխանատու սուբյեկտ՝ պատշաճ պատասխանող, ուստի վերջինիս դեմ հարուցված հայցը ենթակա չէր բավարարման:

4.3. Վիրավորանքից պաշտպանվելու հայցի պահանջը

Ինչպես վերոգրյալում նշվեց, վիրավորանքի վերաբերյալ գործերում առկա է թվով երեք իրավունքների պաշտպանության միջոցներ՝ ներողություն խնդրելու, վճիռը լրատվության միջոցում հրապարակելու և մինչև երեք միլիոն դրամի չափով փոխհատուցում վճարելու վերաբերյալ: Դրամական կարգով փոխհատուցման ձևի ընտրության դեպքում, ինչպես զրպարտության ժամանակ, պետք է հիմնավորումներ ներկայացվի դրա ներկայացման և չափի անհրաժեշտության դեպքում, քանի որ դատարանը կարող է համարել, որ միայն ներողություն խնդրելը բավարարել է ձեր իրավունքները վերականգնելու համար, հաշվի առնելով ոչ նյութական վնասը ոչ նյութական միջոցով փոխհատուցելու առաջնահերթությունը:

Վիրավորանքի վերաբերյալ գործերով հայցում կարելի է նշել փոխհատուցման ենթակա դատական ծախսերի չափը: Այդ դեպքում՝ անհրաժեշտություն չկա հայցի պահանջներում ներառել փաստաբանի վարձատրության գումարը բռնագանձելու պահանջը, դատարանը հայցը բավարարելու դեպքում օրենքի ուժով կանդրադառնա դատական ծախսերի բաշխման խնդրին՝ գնահատելով փաստաբանական ծախսերը խելամտության տեսակետից: Վերջինիս դեպքում, պետական տուրք վճարելու կալիք չի լինի:

4.4. Պատասխանողի ընտրությունը

Զրպարտության և վիրավորանքի գործերով պատասխանատվությունը կրում է տեղեկատվության աղբյուրը կամ հեղինակը: Այն դեպքերում, երբ տեղեկատվության աղբյուրը կամ հեղինակը հանդես է գալիս անանուն եղանակով կամ կեղծ անհատական տվյալներով, դատավարության սուբյեկտը, այսինքն՝ պատասխանողը, համարվում է այդ տեղեկատվության «տարածողը» (այլ կերպ՝ հրապարակողը, արտատպողը կամ վերարտադրողը):

Եթե արտահայտությունը կատարել է լրագրողը, հրապարակախոսը և այլն, ու այդ նյութը տպագրվել և/կամ հեռարձակվել է ԶԼՄ-ում, հայցը պետք է ներկայացվի լրագրողի, հրապարակախոսի դեմ:

Հերքման, հրապարակային ներողություն խնդրելու տեքստերը հրապարակելու պահանջները զրպարտության և վիրավորանքի փաստի հաստատումից ածանցվող պահանջներ են: Այդ պահանջի մասով պատասխանող կարող է լինել զրպարտող և վիրավորող արտահայտությունների հեղինակին տարածման հարթակ տրամադրողը: Հերքման կամ հրապարակային ներողություն խնդրելու տեքստերը կամ դատական ակտը հրապարակելու պահանջի մասով պատասխանողի դատավարական կարգավիճակը՝ «համապատասխանող» կամ «երկրորդ պատասխանող» է: Եթե վերը նկարագրված իրավիճակում հայցը ներկայացվի միայն արտահայտությունների

հեղինակի կամ միայն ԶԼՄ-ի դեմ, տեքստը հրապարակելու պահանջի մասով արտահայտությունների հեղինակը պատշաճ պատասխանող չէ, իսկ վնասի փոխհատուցման, ներողություն խնդրելու պահանջի մասով պատշաճ պատասխանող չէ արտահայտությունների հեղինակը:

Երկու (կամ ավելի) պատասխանողների դեմ պահանջի ներկայացումն անհրաժեշտություն է անձի խախտված արժանապատվությունն արդյունավետ պաշտպանելու և լիարժեք վերականգնելու համար: Պետք է հաշվի առնել, որ ԶԼՄ-ի կամքի բացակայության պարագայում լրագրողը, հրապարակողը չի կարողանա լրատվության այդ միջոցով հրապարակումներ իրականացնել:

Եթե հայցը միայն ներկայացվել է լրագրողի կամ հրապարակողի դեմ, հայցի ոչ նյութական հատուցման պահանջների բավարարումը (հերքման կամ ներողություն խնդրելու տեքստը և հայցվորի համար հնարավոր բարենպաստ վճռի ամբողջական տեքստը ԶԼՄ-ում հրապարակելը) միջամտություն կլինի հայցվորից (արտահայտության հեղինակից) տարբերվող անձի՝ ԶԼՄ-ի իրավունքներին:

Ներողություն հայցող տեքստի և դա հրապարակելը պարտավորեցնող դատական ակտի հրապարակումը լրատվության միջոցում կախված է վերջինի կամքից: Առանց ԶԼՄ-ի գործում որպես համապատասխանող կամ երկրորդ պատասխանող ներգրավվածության և գործին մասնակցության՝ դրա իրավունքների ու պարտականությունների մասին վճռի կայացման պարագայում, վերջինս կլինի ոչ օրինական ու պատճառ կհանդիսանա դրա բեկանման համար: Օրինակ. ներողություն հայցող տեքստի և դա հրապարակելը պարտավորեցնող դատական ակտը հրապարակելու պահանջներով հայցը դատարանի կողմից նույնությամբ բավարարելու և պատասխանողի կողմից կամավոր չկատարելու դեպքում հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից այն չի կարող կատարվել. կատարողական թերթում բացակայելու է այն անձի անվանումը՝ ում հարկադրելով հնարավոր կլինի հասնել հայցվորի իրավունքների վերականգնմանը:

Այն դեպքում, երբ վիրավորող կամ զրպարտող հրապարակումը հղում չի պարունակում տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, փոխհատուցման պարտավորությունը՝ քաղաքացիական պատասխանատվությունն ընդհանրապես, կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը: Եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա՝ լրատվական գործունեություն իրականացնողը (տես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ-րդ հոդվածի 9-րդ կետը): Այս դեպքում՝ վերոնկարագրյալ երկու պահանջների մասով էլ որպես պատասխանող պետք է հանդես գա ԶԼՄ-ն:

Զանգվածային լրատվության մասին օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է չնույնականացվող աղբյուրի սահմանումը, որի համաձայն չնույնականացվող աղբյուր է համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայքը կամ համացանցային կայքի կամ հավելվածի օգտահաշիվը կամ ալիքը կամ էջը (այսուհետ՝ աղբյուր), որի տնօրինողի նույնականացման տվյալները բացակայում են կամ ակնհայտ կեղծ են կամ թերի են, եթե այդ թերությունը թույլ չի տալիս նույնականացնել աղբյուրը տնօրինողին: Տնօրինողի նույնականացման տվյալներն են աղբյուրը տնօրինող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման հասցեն, եթե նա լրատվական գործունեությունն իրականացնում է որպես անհատ ձեռնարկատեր, ապա նաև

պետական հաշվառման համարը, իսկ եթե աղբյուրը տնօրինում է իրավաբանական անձը՝ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցման համարը:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ լրատվական գործունեություն իրականացնողը չի ազատվում տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից, եթե այն չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության վերարտադրությունն է՝ անկախ այդ չնույնականացվող աղբյուրին հղում կատարելու հանգամանքից:

Նույնանման կարգավորում է սահմանված նաև Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ մասում: Եթե արատավորող արտահայտությունը հրապարակվել է որևէ լրատվամիջոցում և այն պարունակում է հղում հեղինակին, սակայն հեղինակը անհնար է նույնականացնել, ապա կարող եք հայցադիմումը ներկայացնել ընդդեմ լրատվամիջոցի: Հարկ է նշել, որ եթե հեղինակի նույնականացման տվյալները (հասցե, անձնագրային տվյալներ և այլն) նշված չեն հրապարակման մեջ, դա չի նշանակում, որ այն չնույնականացվող աղբյուր է, հետևաբար եթե անձի տվյալները առկա են, սակայն չեք կարողանում նույնականացնել, ապա հարցմամբ կարող եք այդ տեղեկատվությունը պահանջել լրատվամիջոցից:

Վճռաբեկ դատարանը թիվ ՍԴ1/0530/02/18 քաղաքացիական գործով 2023թ. փետրվարի 8-ին կայացված որոշմամբ անդրադարձել է պատասխանողի ընտրության հարցին, նշելով, որ լրատվական գործունեություն իրականացնողը վիրավորանքի կամ զրպարտության համար փոխհատուցման պարտավորություն կարող է կրել այն դեպքում, երբ վիրավորանք հանդիսացող արտահայտությունը կամ զրպարտություն հանդիսացող տեղեկությունը տարածել է իր անունից: Այն դեպքում, երբ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի է և լրատվական գործունեություն իրականացնողը բացահայտել է նրա անձը, փոխհատուցման պարտավորությունը լրատվական գործունեություն իրականացնող անձը կրել չի կարող, այդ պարտավորությունը կարող է կրել, կախված կոնկրետ գործի հանգամանքներից կամ լրագրողը կամ վիրավորանք թույլ տված կամ զրպարտություն կատարած անձը:

Այնուամենայնիվ, **հայցադիմումը նպատակահարմար է ներկայացնել և լրատվամիջոցի դեմ, և հեղինակի դեմ, եթե հայցային վաղեմության ժամկետում չեք կարողանում համոզվել աղբյուրի նույնականացվող հանդիսանալու հարցում**:

4.5. Հայցի ապահովման միջոց

Վիրավորանքի և զրպարտության գործերով, երբ նյութական պահանջները ներկայացվում են ոչ նյութական հատուցումը ոչ բավարար լինելու պարագայում, պատասխանողի գույքի նկատմամբ հայցի ապահովման միջոցների կիրառությունը հաճախ համաչափ միջոց չէ: Այնուամենայնիվ հայցվորները իրավունք ունեն ներկայացնել նման միջնորդություն Քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի հիմքով:

Դուք կարող եք որպես հայցի ապահովման միջոցներ պահանջել պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնել կամ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը: Այսպիսով, կարող եք պահանջել ոչ միայն գույքի վրա արգելանք դնել (այն պարագայում, եթե ներկայացնում եք գումարային պահանջ) այլև կարող եք պահանջել պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն ձեռնպահ մնալ, օրինակ՝ չտարածել ձեր վերաբերյալ և զրպարտող կամ վիրավորող հրապարակումը: Կարող եք նաև պահանջել ժամանակավորապես հեռացնել

առցանց բովանդակությունը կամ արգելափակել դրա հասանելիությունը և այլն: Այն դեպքերում, երբ ԶԼՄ-ն դատաքննության ընթացքում շարունակում է տարածել հայցվորի պատիվն ու արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկություններ, հայցվորը կարող է դատարանին միջնորդել՝ արգելել պատասխանողին որոշակի գործողություններ կատարել, օրինակ՝ դադարեցնել նմանատիպ հրապարակումները:

Հարկ է նշել, որ եթե գտնում եք, որ անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելը կարող է դժվար կամ անհնարին դառնալ, դատավարության ընթացքում իրավունք ունեք այդ ապացույցների ապահովման վերաբերյալ միջնորդություն ներկայացնեք դատարան՝ համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 65-րդ հոդվածի:

Հայցվորը, որպես հայցի ապահովման միջոց կարող է պահանջել հայցագնի չափով արգելանք դնել պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա:

5. Դատաքննության նախապատրաստական փուլ

Զրպարտության և վիրավորանքի գործերով նախնական դատական նիստի պատշաճ անցկացումն էական նշանակություն ունի գործի ելքի համար: ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167.-րդ հոդվածը սահմանում է նախնական դատական նիստի կարգը:

Դատարանը նախնական դատական նիստում հերթականությամբ պարզում է հայցի առարկան, հայցի փաստական և իրավական հիմքերը, պատասխանողի առարկությունները, դատավորության մասնակիցների կազմը, վիճելի իրավահարաբերության բնույթը, կիրառելի իրավական նորմերը, լուծում է ընդդատության հետ կապված հարցերը, հաշտության հնարավորությունը, ապացուցման ենթակա փաստերը, բաշխում է ապացուցման պարտականությունը, սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները, քննում է ապացույցներ ներկայացնելու միջնորդությունները, լուծում է հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման, ապացույց պահանջելու, ապացույց ապահովելու, փորձաքննություն նշանակելու, դատական նիստին վկա, փորձագետ կանչելու, թարգմանիչ ներգրավելու, գործին մասնակցող անձին հարցաքննելու, դատական հանձնարարություն տալու, ապացույցներն իրենց գտնվելու վայրում հետազոտելու վերաբերյալ հարցերը: Նախնական դատական նիստում դատարանը նաև որոշում է ապացույցների հետազոտման հաջորդականությունը և քննում է գործի արդյունավետ քննությանն ուղղված՝ գործին մասնակցող անձանց այլ միջնորդությունները:

Ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք, սակայն դատարանի կողմից գործի նախապատրաստական փուլում ապացուցման առարկան և բեռը բաշխելուց հետո կողմերն հնարավորություն ունեն ներկայացնելու այն ապացույցները, որոնցով վերջիններս կարող են հիմնավորել իրենց պահանջները և առարկությունները (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդված): Հարկ է նշել, որ ապացույցներ կարող են ներկայացվել դատարանի կողմից սահմանված ժամկետում և այդ ժամկետի խախտմամբ ներկայացված ապացույցներ չեն քննարկվի, եթե չհիմնավորվի, որ ժամկետը բաց է թողնվել հարգելի պատճառներով:

Հայցի առարկան ու հիմքը պարզելու փուլում պետք է հստակեցվեն այն արտահայտությունները, որոնք վիրավորական են կամ զրպարտող: Հայցվորը պետք

է շահագրգռված լինի ճշգրտորեն ներկայացնելու, թե կոնկրետ որ արտահայտություններն է համարվում վիրավորական կամ զրպարտող, քանի որ դա հիմնավորելու ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը:

Արտահայտության՝ «ստույգ փաստ» կամ «գնահատողական դատողություն» լինելու փաստի ապացուցման բեռը համապատասխանաբար կրում են հայցվորը և պատասխանողը:

Ապացուցում պահանջող փաստերի շրջանակի քննարկման փուլում, պայմանավորված վիրավորանքի և զրպարտության իրավահարաբերությունների առանձնահատկությամբ, դատարանը պարզում է զրպարտություն և/կամ վիրավորանք հասցնելու համար պատասխանատվությունը վրա հասնելու համար պարտադիր այն փաստերը (առանց դուրս գալու հայցի շրջանակներից՝ հայցում շարադրված փաստերի շրջանակներից), որոնք չեն ընդունվում հայցվորի, պատասխանողի և երկրորդ պատասխանողի (համապատասխանողի) կողմից և այդ փաստերի ապացուցման պարտականությանը բաշխում է՝ դրանց ապացուցման կանոններին համապատասխան [44]: Այն փաստերը, որոնք ընդունվում են դատավարության մասնակիցների կողմից՝ անհրաժեշտություն չկա կրկին ապացուցելու և դրանց վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու:

6. Ապացուցման բեռը

6.1. Ընդհանուր սկզբունքը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածում տարանջատված են «զրպարտությունը» ու «վիրավորանքը», տարբերակված են ինչպես դրանցից անձի արժանապատվության պաշտպանության, այնպես էլ՝ զրպարտելու կամ վիրավորելու մեջ մեղադրվող կողմի պաշտպանության ընթացակարգերը:

Որպեսզի պատասխանողը կարողանա պաշտպանվել իրեն ներկայացված մեղադրանքից (զրպարտելու կամ վիրավորանք հասցնելու), դատարանը կարողանա գնահատել հնարավոր խախտված իրավունքը վերականգնելու համար պահանջվող եղանակի անհրաժեշտությունը, պիտանիությունը, համաչափությունը, պահանջվող փոխհատուցման չափի ու զրպարտվելու կամ վիրավորվելու պատճառով կրած վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, համաչափությունը, հայցվոր կողմը պետք է դատարանին ու պատասխանողին ներկայացնի այն արտահայտությունները, որոնք ինքը գտնում է, որ իրեն զրպարտում են, և այն արտահայտությունները, որոնք գտնում է, որ վիրավորական են:

Մրցակցային դատավարությունում ո՛չ դատարանը և ո՛չ էլ պատասխանողը հայցվորի փոխարեն հրապարակումից արտահայտությունները մատնացույց անելու, անջատելու պարտականություն չեն կրում, նրանք պարտավոր չեն հայցվորի փոխարեն գնահատելու, թե դրանցից յուրաքանչյուրը զրպարտչական են, թե՝ վիրավորական (դատավորը նույնպես իրավունք չունի): Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ ինքն է կրում իր վկայակոչած փաստերի ապացուցման պարտականությունը և, եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը,

[44] Վճռաբեկ դատարանի՝ Երևանի քաղաքապետարանի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի վերաբերյալ թիվ ԵԷԴ/1637/02/09 քաղաքացիական գործով 27.05.2011թ որոշում և Վճռաբեկ դատարանի՝ Կարեն և Տատյանա Տոնոյանների վերաբերյալ թիվ ԵԱԴԴ/0524/02/12 քաղաքացիական գործով 04.10.2013թ որոշում:

դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Եթե կողմը, ում վրա օրենքով դրված է փաստն ապացուցելու պարտականությունը, չի կարողանում ապացուցել այդ փաստը, դա համարվում է չապացուցված և նրա պահանջը չի կարող բավարարվել:

Վճռաբեկ դատարանը թիվ ԱՎԴ/3905/02/19 քաղաքացիական գործով 07/05/2024թ. որոշմամբ սահմանեց գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու նպատակով դատարանների որոշակի ակտիվ գործողությունների շրջանակը: Ըստ Վճռաբեկ դատարանի.



«Վերաքննիչ դատարանը պետք է պարզեր, թե արդյո՞ք լրագրողը վիճահարույց նյութը հրապարակելուց առաջ բարեխղճորեն կատարել է իր սեփական քննությունը, և այդ իմաստով արդյո՞ք կարելի էր փաստել, որ լրագրողն ազատված էր իր հայտարարությունների փաստական հանգամանքները ստուգելու լրագրողական պարտականությունից՝ հաշվի առնելով տեղեկատվության իր աղբյուրների հուսալիության ու իսկության աստիճանը գնահատելու լրատվամիջոցի ողջամիտ հնարավորությունը»:

Հրապարակման արտահայտությունները իրարից տարանջատելու, դրանց գնահատական տալու հստակեցումը պետք է ներկայացված լինի հայցում կամ կատարվի ոչ ուշ, քան ապացուցման պարտականության բաշխումը: Այլապես՝ ապացուցման պարտականությունը բաշխելուց հետո կամ վերադասության կարգով ոչ բարենպաստ դատական ակտը վիճակելիս նման հստակեցում կատարելու հնարավորությունը բաց թողնված կլինի:

Հայցում կամ ոչ ուշ՝ քան ապացուցման պարտականության բաշխումը վիճելի արտահայտություններն անջատած չլինելու, դրանց՝ զրպարտչակա՞ն, թե՞ վիրավորական լինելու տեսակետից գնահատական տված չլինելու դեպքում դատարանը հայցը կմերժի՝ հայցվորի կողմից իր վերաբերյալ ներկայացված արտահայտությունների զրպարտող կամ վիրավորող լինելը ապացուցած չլինելու պատճառաբանությամբ:

Զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին:

Հրապարակման հիմքում ընկած փաստական հանգամանքների ապացուցման համար ո՛չ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր պահանջվելու հանգամանքի ապացուցման բեռը կրում է պատասխանողը (տես ստորև):

6.2. Վաղեմության ժամկետի մեկնարկի սկզբի ապացուցման բեռը

Հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբը պայմանավորված է անձի՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին տեղեկացված լինելու պահի (Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 Հոդված, 13-րդ կետ): Հայցային վաղեմության մասին վկայակոչած անձն է պարտավոր ապացուցել նաև այդ ժամկետի սկիզբը հաշվարկելու համար անհրաժեշտ փաստը՝ **վիրավորանքի կամ զրպարտության մասին հայցվորի տեղեկացված լինելու** առկայությունը:

Որպես կանոն, դա **հրապարակման օրն** է, մյուս կողմից օբյեկտիվորեն տուժողին է հայտնի կոնկրետ տեղեկատվությունն իրեն հասու լինելու ժամանակը, հետևաբար

տուժողի կողմից այլ բան ապացուցված չլինելու դեպքում հայցային վաղեմության սկիզբ է համարվում համապատասխան տեղեկատվության հրապարակման օրը:

Հայցվորի կողմից հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման համար անհրաժեշտ փաստերի ապացուցումը կարող է իրականացվել այնպիսի ապացույցներով, որոնք առավել հավանական են դարձնում կոնկրետ փաստի գոյությունը: Եթե ապացուցման պարտականություն կրող կողմը ներկայացրել է բացառապես անուղղակի ապացույցներ, որոնք իրենց համակցության մեջ առավել հավաստի են դարձնում հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը, նման ապացույցները չեն մերժվի զուտ այն հիմքով, որ դրանք ուղղակի ապացույցներ չեն:

Նշված մոտեցումը անուղղակի ապացույցների մասով սահմանվել է Վճռաբեկ դատարանի կողմից իր ԵԿԴ/3124/02/11 գործով որոշման մեջ, որում դատարանը մեկնաբանելով հայցային վաղեմության երկու տարրերի՝ մեկամսյա և վեցամսյա ժամկետների կիրառությունը, այս երկու ժամկետների ապացուցման բեռը, հայցային վաղեմության ժամկետի բաց թողած լինելու կամ չլինելու փաստի ապացուցման պարտականությունը սահմանեց սահմանեց հետևյալ կերպ.

«…օբյեկտիվորեն տուժողին է հայտնի կոնկրետ տեղեկատվությունն իրեն հասու լինելու ժամանակը, հետևաբար տուժողի կողմից այլ բան ապացուցված չլինելու դեպքում հայցային վաղեմության սկիզբ է համարվում համապատասխան տեղեկատվության հրապարակման օրը: Միաժամանակ հարց է առաջանում, արդյոք բացարձակ առումով պետք է դիտարկել փաստը չապացուցելու հետևանքը նմանատիպ գործերով: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման համար անհրաժեշտ փաստերի ապացուցումը կարող է իրականացվել այնպիսի ապացույցներով, որոնք առավել հավանական են դարձնում կոնկրետ փաստի գոյությունը»[45]:

Այդպիսի ապացույց կարող է լինել, օրինակ՝ հայցվորի նամակում այդ փաստի վերաբերյալ կատարված հայտարարությունը, որը նա հղել է պատասխանողին՝ հերքման և/կամ պատասխանի հրապարակման պահանջով: Այդպիսի օրինակ է հետևյալը. *«…ս/թ մայիսի 5-ին ինձ հայտնեցին, որ Ձեր կողմից խմբագրվող կայքի ս/թ ապրիլի 20-ի համարում, «Խմբագրական» վերտառությամբ բաժնում հրապարակվել է «….» վերնագրով հոդված (առանց որոշակի հեղինակի վկայակոչման), որում ինձ վերագրվում է «….», արարք: Հոդվածում ինձ վերագրվող արարքը և դրա առանձին փաստեր չեն համապատասխանում իրականությանը, ուստի՝ պահանջում եմ հերքել դրանք»:*

Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/3124/02/11 քաղաքացիական գործով զարգացրել է դատական պրակտիկա առ այն, որ մեկամսյա ժամկետը, որպես հայցային վաղեմության ժամկետ ներառված լինելով, վեցամսյա ժամկետում ենթակա է վերականգնման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված կարգով: Մինչդեռ վեցամսյա ժամկետի բացթողնման դեպքում այն վերականգնման ենթակա չէ ու օրենսդրական նման ձևակերպումը ենթադրում է, որ վիրավորանքի և զրպարտության դեպքում դրա տարածման մակարդակը նվազում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում, որից հետո առարկայազուրկ է դառնում նման պահանջի ներկայացումը: Մյուս կողմից հատկանշական է այն, որ բոլոր դեպքերում վեցամսյա ժամկետում հայցի

[45] Վճռաբեկ դատարանի՝ Պարույր Հայրիկյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/3124/02/11 քաղաքացիական գործով 25/12/2012թ. որոշում, էջ 4:

ներկայացումը դեռևս չի նշանակում հայցային վաղեմության ժամկետի պահպանում, քանի որ այդ դեպքում իմաստազուրկ է դառնում մեկամսյա ժամկետի նախատեսումը:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ հայցային վաղեմության ժամանակահատվածում դատարան դիմելը դեռևս չի բացառում այդ հարցի հետագա քննարկումը, քանի որ էական է, թե ինչ արտահայտությունների կամ ում դեմ եք ներկայացրել հայցը հայցային վաղեմության ժամանակահատվածում: Այն պարագայում, երբ հայցային վաղեմության ժամանակահատվածում չեք ներկայացնում կոնկրետ արտահայտությունների վերաբերյալ պահանջներ հետագայում դրանք լրացնելու պարագայում, լրացված հայցապահանջների մասով կարող է կիրառվել հայցային վաղեմություն, եթե դրանք լրացվել են մեկամսյա ժամկետի խախտմամբ:

Եթե հայցադիմումը մեկամսյա ժամկետում ներկայացվել է ոչ պատշաճ պատասխանողի դեմ, հետագայում, եթե դուք պատասխանողին փոխարինեք կամ ավելացնեք նոր պատասխանող, նոր պատասխանողի մասով կարող է կիրառվել հայցային վաղեմություն, քանի որ այդ անձի դեմ ներկայացված պահանջը ծագել է հայցային վաղեմության մեկամսյա ժամկետի ավարտից հետո:

6.3. Արտադատական կարգով իրավական պաշտպանության միջոցի դիմելու և պահանջի բավարարված լինելու ապացուցման բեռը

Զրպարտության կամ վիրավորելու հետևանքով ծագող հարաբերությունը դադարում է, երբ լրատվական գործունեություն իրականացնողը տուժողի պահանջով հրապարակել է հերքում կամ տուժողի պատասխանը:

Այն դեպքում, երբ անձի պատիվն ու արժանապատվությունն արատավորող արտահայտությունը տարածվել է ԶԼՄ-ով և անձը մինչև դատական պաշտպանության միջոցի դիմելը՝ հերքման և/կամ պատասխան հրապարակելու պահանջով դիմել է ԶԼՄ-ին ու այն բավարարվել է, լրագրողը, հրապարակախոսը, ԶԼՄ-ն իրավունք ունեն դատարանից պահանջել հայցը մերժել՝ հայց ներկայացնելու իրավունք չունենալու հիմքով:

Եթե կողմերի միջև առկա է վեճ հրապարակված հերքման և/կամ պատասխանի պատշաճության՝ օրենքով նախատեսված պահանջների պահպանված լինելու շուրջ, վերջինիս հիմքում ընկած փաստերի ապացուցման բեռը կրում է հայցվորը: Այդ դեպքում հերքում և/կամ պատասխան հրապարակված լինելու և օրենքի պահանջների պահպանմամբ հրապարակած լինելու փաստերի ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը՝ լրագրողը, հրապարակախոսը, ԶԼՄ-ն:

6.4. Արտահայտության հրապարակայնորեն արված լինելու ապացուցման բեռը

Արտահայտության հրապարակային ձևով կատարված լինելու փաստի ապացուցման դատավարական բեռը կրում է հայցվորը[46]: Ապացուցման ենթակա է այն հանգամանքը, որ արտահայտությունը կատարվել է առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ կամ նրան հաղորդակից դարձնելով: Այս մասին մանրամասնորեն ներկայացված է Գլուխ 1-ի 1.2.2. բաժնում:

[46] Վճռաբեկ դատարանի՝ Անիկ Դավթյանի վերաբերյալ թիվ ԱՎԴ/0179/02/13 քաղաքացիական գործով 08.05.2014թ որոշում:

6.5. Արտահայտության արատավորող լինելու ապացուցման բեռը

Արտահայտության արատավորող լինելու փաստի ապացուցման դատավարական բեռը կրում է հայցվորը: Պետք է պարզել արդյոք տեղեկությունը [օբյեկտիվորեն] արատավորող է, թե՞ որպես այդպիսին է ընկալում հայցվորը: Արտահայտության արատավորող լինելու իրավական բովանդակությունը ներկայացվել է 1.2.4. բաժնում: Ի հավելումն, ներկայացնում ենք այդ հասկացության սահմանումը Վճռաբեկ դատարան թիվ ԵԴ/26070/02/19 քաղաքացիական գործով 2023թ. մարտի 10-ին կայացված որոշման մեջ.

«Որևէ արտահայտության կամ բառի վիրավորական կամ զրպարտող իմաստ ունենալը, ոչ կոռեկտ լինելն ինքնաբերաբար չի կարող հանգեցնել պատասխանատվության, եթե պահպանված են կարծիքի արտահայտման ազատության սահմանները, և կարծիքի արտահայտման նպատակը հասցեատիրոջը վիրավորելը կամ զրպարտելը չէ…կարևոր է նաև կարծիք արտահայտողի նպատակի օբյեկտիվ ընկալումը՝ մասնավորապես, այն հանգամանքը, թե հասարակության միջին վիճակագրական անդամը կընկալի արդյոք այդ կարծիքը՝ որպես այլ անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի արատավորման ուղղակի նպատակ ունեցող, թե որպես փաստական հիմք ունեցող գնահատողական դատողություն, սեփական կարծիք՝ որոշակի դեպքերի, իրադարձությունների կամ անձանց վարքագծի վերաբերյալ (այլ կերպ ասած՝ քննադատություն): Ընդ որում, նմանատիպ գործերով էական նշանակություն ունի հենց զրպարտչական բնույթի փաստական տվյալների տարբերակումը փաստական հիմք ունեցող գնահատողական դատողություններից»:[47]

Արտահայտությունների արատավորող լինելու շեմը հաղթահարված լինելը ստուգելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հրապարակային խոսքի նախորդող և հաջորդող իրադարձությունները, արտահայտությունների ամբողջ տեքստը, պատասխանողի բացատրությունները: Արտահայտությունների սուր, որոշակի սադրիչ, նույնիսկ զրպարտող կամ վիրավորող լինելը ինքնին դեռևս բավարար չէ պնդելու, որ առկա է իրավունքների խախտում:

6.6. Արտահայտության վիրավորական լինելու ապացուցման բեռը

Արտահայտությունները տարանջատելու, դրանց զրպարտչական կամ վիրավորական լինելու ապացուցման բեռը կրում է հայցվորը: Վիրավորական արտահայտության ի սկզբանե անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ հետապնդելու, կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունեցած լինելու ապացուցման բեռը ևս կրում հայցվորը:

[47] Վճռաբեկ դատարանի՝ Սոնա Աղեկյանի վերաբերյալ թիվ ԵԴ/26070/02/19 քաղաքացիական գործով 2023թ. մարտի 10-ի որոշում, էջ 9:

Վերոգրյալ երկու հատկանիշների միաժամանակյա առկայությունը պարտադիր է, որ պատասխանողի համար ծագի իր կողմից ապացուցման ենթակա փաստերի ապացուցման պարտականությունը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝



«…տեղեկատվության հրապարակման դրդապատճառների ուսումնասիրությունը մեծ կարևորություն ունի յուրաքանչյուր կոնկրետ գործով տեղեկատվության հրապարակման իրավաչափության և համապատասխան արարքի (գործողության) իրավաբանական որակման հարցը գնահատելիս: Չի կարող իրավաչափ համարվել այն գործողությունը, որն ի սկզբանե նպատակ է հետապնդել վնաս պատճառել անձին, կամ երբ տեղեկություններ տարածողն անփութություն է դրսևորել՝ չստուգելով դրանց իսկությունը [48]:

Նույն միտքն արտահայտվել է նաև Վճռաբեկ դատարանի կողմից հետևյալ կերպ.



« … արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա: Մասնավորապես՝ նման նպատակի առկայության մասին կարող է վկայել այնպիսի իրավիճակը, երբ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին: Այս փաստի ապացուցման բեռը նույնպես կրում է հայցվորը»[49]:

Վերոգրյալ երկու հատկանիշների միաժամանակյա առկայությունը պարտադիր է, որ պատասխանողի համար ծագի իր կողմից ապացուցման ենթակա փաստերի ապացուցման պարտականությունը:

Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/36140/02/19 քաղաքացիական գործով 2024թ. հունիսի 10-ին կայացված որոշմամբ անդրադարձել է արտահայտությունների դիտավորյալ ներկայացված լինելու ապացուցման բեռին հետևյալ կերպ.



«…զրպարտություն պետք է համարել ոչ թե գնահատողական դատողությունը, երբեմն նաև բացասականը, այլ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու դիտավորությամբ կատարված հրապարակային արտահայտությունը: Արատավորելու նպատակը ենթադրում է, որ որոշակի արտահայտություն անելով՝ անձը դիտավորությամբ ցուցաբերում է կանխամտածված գործողություն անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի դեմ: Մինչդեռ գնահատողական դատողությունը փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում արվող հետևություն է»:[50]

---

[48] Սահմանադրական դատարանի 15.11.2011թ ՍԴՈ-997 որոշում §§ 7, 8:

[49] Վճռաբեկ դատարանի՝ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի վերաբերյալ թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով 27/04/2012թ որոշում:

[50] Վճռաբեկ դատարանի՝ Արտակ Գալստյանի վերաբերյալ թիվ ԵԴ/36140/02/19 քաղաքացիական գործով 2024թ. հունիսի 10-ի որոշում, էջ 10:

Հետևաբար, հայց ներկայացնելիս անհրաժեշտ է հիմնավորել, որ հայցվորը արտահայտությունները կատարել է դիտավորյալ կերպով, նպատակ հետապնդելով արատավորել ձեր պատիվը, արժանապատվությունը կամ բարի համբավը:

Վճռաբեկ դատարանը ԱՎԴ/2194/02/16 քաղաքացիական գործով 2020թ. դեկտեմբերի 11-ին կայացված որոշմամբ անդրադարձել է արտահայտությունը վիրավորանք հանդիսանալու չափանիշներին, նշելով, առաջին, որ արտահայտությունն իրականում պետք է արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, որպիսի փաստն ապացուցելու դատավարական բեռը կրում է հայցվորը: Երկրորդ, որ արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա: Մասնավորապես՝ նման նպատակի առկայության մասին կարող է վկայել այնպիսի իրավիճակը, երբ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին: Այս փաստի ապացուցման բեռը նույնպես կրում է հայցվորը: Երրորդ, արտահայտությունը պետք է կատարված լինի հրապարակային ձևով, որպիսի փաստի ապացուցման դատավարական բեռը դարձյալ կրում է հայցվորը: Հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները և ներկայացված փաստերը: Վերջիններս երրորդ անձի ներկայությամբ կատարված են համարվում նաև այն դեպքում, երբ երրորդ անձը ևս կատարում է արտահայտություններ և ներկայացնում փաստեր, որոնք բովանդակային առումով կապված են վիրավորողի արած արտահայտությունների կամ ներկայացրած փաստերի հետ (օրինակ՝ երկու և ավելի անձանց կողմից վիրավորելը): Նման դեպքերում առկա է վնասի համատեղ պատճառում:

Վիրավորական արտահայտության դիտավորությանը Վճռաբեկ դատարանը անդրադարձել է նաև ԵԴ/7480/02/18 քաղաքացիական գործով 2020թ. հուլիսի 21-ի որոշմամբ:

6.7. Արտահայտության զրպարտող լինելու ապացուցման բեռը

Զրպարտության վերաբերյալ գործերի քննության ընթացքում գործում է այն կանխավարկածը, որ փաստերի՝ իրականությանը համապատասխանելու ապացուցման բեռը կրում է պատասխանողը: Այս ընդհանուր կանոնից բացառություն է հանդիսանում միայն այն դեպքը, երբ ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր: Այս պարագայում ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը, սակայն միայն այն դեպքում, երբ պատասխանողը կհիմնավորի (կապացուցի) իրենից պահանջվող գործողությունների և ջանքերի ոչ ողջամիտ լինելը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին: Եթե նույնիսկ պատասխանողից պահանջվող գործողությունները կամ ջանքերը ոչ ողջամիտ են, սակայն անհրաժեշտ ապացույցներին հայցվորը կապացուցի, որ ինքը չի տիրապետում, ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Վիճարկվող փաստերի՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքի հաստատումը պատասխանողին (ենթադրյալ վնաս պատճառողին) ազատում է պատասխանատվությունից, հետևաբար հանգեցնում է ենթադրյալ պարտավորության դադարման:

6.8. «Գերական հանրային շահի» ապացուցման բեռը

Հրապարակումը «գերակա հանրային» շահով պայմանավորված լինելու փաստի ապացուցման բեռը, ստորև շարադրված ծավալով և հերթականությամբ՝ կրում է պատասխանողը:

Գերակա հանրային շահով պայմանավորված լինելու պայմանն ունի գերակշռող ազդեցություն, իսկ մյուս պայմանները՝ *ճշմարտությունը և հիմնավորվածությունը պարզելը ու հավասարակշռված և բարեխղճորեն ներկայացնելը* ունեն լրացուցիչ բնույթ և լրացնում են այդ պայմանին՝ այդպիսով ամբողջացնելով տեղեկությունը զրպարտություն չդիտելու հիմքը: Հետևաբար՝ հիշատակված դրույթի «ճշմարտությանը և հիմնավորվածության պարզած լինելն» ու «հավասարակշռված և բարեխղճորեն ներկայացրած լինելու» պայմաններն ինքնուրույն գործել չեն կարող:

«Գերակա հանրային շահ» եզրույթում օգտագործվող «գերակա» ածականը բնութագրում է հրապարակվող տեղեկատվության հրատապությունը, այդ տեղեկատվության սոցիալական անհրաժեշտությունը: Դատարանները նշված եզրույթը գնահատելիս օգտվում են որոշակի հայեցողությունից և կոնկրետ դեպքում պետք է որոշեն, թե արդյոք այս կամ այն տեղեկատվությունը պայմանավորված է եղել սոցիալական անհրաժեշտությամբ, թե՞ այն զուտ մասնավոր բնույթ է կրել:

Վճռաբեկ դատարանը ԵԿԴ/0807/02/11 գործով 04.07.2013թ որոշման մեջ ընդգծել է, որ մամուլում հրապարակվող ցանկացած տեղեկություն չի կարող բավարարել այս պայմանին, քանի որ տեղեկությունները հաճախ կրում են մասնավոր բնույթ և չունեն հանրային լայն հետաքրքրություն: Ի տարբերություն վիրավորանքի, երբ տեղեկատվության՝ գերակա հանրային շահով պայմանավորված լինելու հանգամանքի առկայությունը բացառում է տվյալ տեղեկատվությունը վիրավորանք համարելը, զրպարտության դեպքում անհրաժեշտ է լրացուցիչ փաստական կազմի առկայություն: Փաստացի տվյալներ հրապարակած անձը պետք է ապացուցի, որ մինչ հրապարակելը ձեռնարկել է այնպիսի միջոցներ, որոնք **հնարավորություն են ընձեռել վերջինիս հանգելու հետևության** այն մասին, որ փաստացի այդ տվյալները պայմանավորված են հանրային գերակա շահով և կարող էին (հավանական է, չի բացառվում) համապատասխանել հրապարակմանը:

Բացի այդ, հրապարակող անձը պետք է նշված տվյալները բացահայտի բարեխիղճ և հավասարակշռված: Բարեխղճությունը ենթադրում է տեղեկատվության (փաստացի տվյալի (տվյալների)) ամբողջական, առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման շարադրանք:

«Մինչև տեղեկությունների հրապարակումը միջոցներ ձեռնարկելու» պահանջն ուղղված է երկու հարցի պատասխանը ստանալուն: Նախ, արդյոք հրապարակվող տեղեկատվությունը բխում է հանրային գերակա շահից, հանրությունն արդյոք հետաքրքրվա՞ծ է նման տեղեկատվությամբ և սպասո՞ւմ է դրան: Երկրորդ՝ հրապարակվող տեղեկությունները համապատասխանո՞ւմ են իրականությանը, թե՞ ոչ:

Տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանել ճշտելու պարտականությունը չպետք է կատարված լինի ձևականորեն: «Գերակա հանրային շահ»-ի դրույթի պաշտպանությունից չեն կարող օգտվել այն սուբյեկտները (լրագրողներ, հրապարակախոսներ, ԶԼՄ-ներ), ովքեր բավարարվել են զուտ տեղեկատվության իրական լինելը ճշտելու պահանջի ձևական պահպանմամբ և թեկուզև ստանալով հրապարակվող նյութի՝ իրականությանը չհամապատասխանելու վերաբերյալ տեղեկություն, հրապարակել են այն:

Վճռաբեկ դատարանը ԵԿԴ/0807/02/11 գործով 04.07.2013թ որոշման մեջ արձանագրել է հետևյալը.



«Ինքնանպատակ կլիներ օրենսդրական նման կարգավորումը, եթե քննարկվող դրույթն ընկալվեր բացառապես տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու ճշտումը կատարելու ֆորմալ պարտականություն: Դրույթի նման մեկնաբանումը և կիրառումը կարող է հանգեցնել ցանկացած տեղեկատվության հրապարակման, թեկուզև անձը, ում վերաբերյալ հրապարակվում է տեղեկատվությունը, նախապես հերքել է այն: Հետևաբար՝ քննարկվող դրույթի պաշտպանությունից չեն կարող օգտվել այն սուբյեկտները (լրագրողներ, հրապարակախոսներ, ԶԼՄ-ներ), ովքեր բավարարվել են զուտ տեղեկատվության իրական լինելը ճշտելու պահանջի ձևական պահպանմամբ և թեկուզև ստանալով հրապարակվող նյութի՝ իրականությանը չհամապատասխանելու վերաբերյալ տեղեկություն՝ հրապարակել են այն»:[51]

Վճռաբեկ դատարանը թիվ ԵԱԴԴ/2612/02/16 քաղաքացիական գործով 2019թ. հոկտեմբերի 18-ին կայացված որոշմամբ անդրադարձել է զրպարտությունը գերակա հանրային շահով պայմանավորված լինելու դեպքին, որտեղ նշել է.



*«Ի տարբերություն վիրավորանքի, երբ տեղեկատվության՝ գերակա հանրային շահով պայմանավորված լինելու հանգամանքի առկայությունը բացառում է տվյալ տեղեկատվությունը վիրավորանք համարելը, զրպարտության դեպքում անհրաժեշտ է լրացուցիչ փաստական կազմի առկայություն: Մասնավորապես՝ փաստացի տվյալներ հրապարակած անձը պետք է ապացուցի, որ մինչ հրապարակելը ձեռնարկել է այնպիսի միջոցներ, որոնք **հնարավորություն են ընձեռել վերջինիս հանգելու հետևության** այն մասին, որ փաստացի այդ տվյալները պայմանավորված են հանրային գերակա շահով և կարող էին համապատասխանել իրականությանը: Բացի այդ, հրապարակող անձը պետք է նշված տվյալները բացահայտի բարեխիղճ և հավասարակշռված: Այս դեպքում բարեխղճությունը ենթադրում է տեղեկատվության (փաստացի տվյալի (տվյալների)) ամբողջական, առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման շարադրանք: Ինչ վերաբերում է «հավասարակշռված» եզրույթին, ապա ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել արձանագրել, որ հավասարակշռվածություն պետք է լինի ներկայացվող փաստացի տվյալների և գերակա հանրային շահի հարաբերակցության առումով: Փաստացի տվյալների հրապարակումը, պայմանավորված լինելով գերակա հանրային շահով, չպետք է պարունակի զրպարտող այլ տեղեկություններ, որոնք չեն առնչվում տվյալ խնդրին*[52]*:*

Հավասարակշռվածություն պետք է լինի ներկայացվող փաստացի տվյալների և գերակա հանրային շահի հարաբերակցության առումով: Փաստացի տվյալների հրապարակումը, պայմանավորված լինելով գերակա հանրային շահով, չպետք է պարունակի զրպարտող այլ տեղեկություններ, որոնք չեն առնչվում տվյալ խնդրին:

---

[51] Վճռաբեկ դատարանի՝ Մարգարիտա Խաչատրյանի վերաբերյալ ԵԿԴ/0807/02/11 քաղաքացիական գործով 04.07.2013թ որոշում, էջ 7:

[52] Վճռաբեկ դատարանի՝ Ժիրայր Սեֆիլյանի վերաբերյալ թիվ ԵԱԴԴ/2612/02/16 քաղաքացիական գործով որոշում, էջ 6:

6.9. Նյութական և ոչ նյութական վնասի չափի ապացուցման բեռը

Զրպարտության և վիրավորանքի գործով հայցվոր կողմն է կրում թե՛ նյութական և թե՛ ոչ նյութական վնասի հատուցման գումարի չափի և կառուցվածքի ապացուցման բեռը: Նույն հրապարակման մեջ մեկից ավելի զրպարտչական և վիրավորական արտահայտությունների առկայության դեպքում, եթե հայցվորը դրանցից յուրաքանչյուրի դիմաց պահանջում է առանձին փոխհատուցում, յուրաքանչյուրի համար ապացուցման բեռը հայցվորը կրում է առանձին-առանձին:

Այդպիսի հստակեցում պետք է ներկայացվի հայցում, ու դա պետք է արվի ոչ ուշ, քան ապացուցման պարտականության բաշխումը դատավորի կողմից: Դա կատարելու հնարավորությունը բաց թողնված լինելու դեպքում՝ բացասական իրավական հետևանքները կրում է հայցվոր կողմը: Մյուս պայմանների բավարարման դեպքում՝ վճռով կարող է հաստատվել իրավունքի խախտման փաստը, սակայն փոխհատուցման ենթակա գումարի չափի և կառուցվածքի ապացուցված չլինելու պայմաններում այդ պահանջը կմերժվի:

Հայցվորը պետք է ապացուցի, թե հայցապահանջի բռնագանձում պահանջվող գումարը «փոխհատուցում» է, թե՞ «գույքային վնաս», դրանք պահանջում է, որպես իր՝ պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող գործողություններից պաշտպանվելու միջոց, թե՞ որպես վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով իր կրած նյութական բնույթի զրկանքների վերականգնման միջոց:

Եթե հայցվորը օրենքով նախատեսված ոչ նյութական հատուցման (ներողություն խնդրելուն, հերքում տարածելուն պարտավորեցնելուն) պահանջներ ներկայացնելուց բացի նաև ներկայացրել է դրամական «փոխհատուցման» պահանջ, նա պետք է ապացուցի նաև, թե ինչո՞ւ առաջինը բավարար չէր պատճառված վնասը փոխհատուցելու համար: Ուշագրավ է այդ մասին Սահմանադրական դատարանի դիրքորոշումը.



«*…արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևերը: Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով, և նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար*»[53]:

Գործը քննող դատարան էլ իր հերթին պետք է գնահատի և ապահովի հավասարակշռությունը՝ դրամական բռնագանձման ձևով արտահայտվելու ազատությանը միջամտության և այդ միջամտությամբ հետապնդվող իրավաչափ նպատակի (տվյալ դեպքում՝ անձի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու նպատակի) միջև արդարացի հավասարակշռությունը, վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող պատասխանատվության համաչափությունն անձի պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասին:

[53] Սահմանադրական դատարանի 15.11.2011թ ՍԴՈ-997 որոշում, էջ 16:

Սահմանադրական դատարանը 2024թ. հոկտեմբերի 1-ին կայացված թիվ ՍԴՈ-1752 որոշմամբ նշել է հետևյալը.

«… ոչ նյութական արժեքներին վնաս հասցվելու պայմաններում, որպես առաջնահերթություն, ոչ նյութական վնասի հատուցման միջոցների կիրառման իմպերատիվ պահանջի հիմքում ընկած է այն ողջամիտ տրամաբանությունը, որ ոչ նյութական արժեքին վնաս պատճառելիս բացառապես նյութական հատուցում տրամադրելը չի կարող հանդիսանալ անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի դեմ ոտնձգությանը համարժեք պատասխանատվություն, քանի որ չի կարող համարժեքորեն փոխհատուցել (վերականգնել) անձի պատվին, արժանապատվու-թյանը և գործարար համբավին պատճառված վնասը:

Այսպիսով, անհրաժեշտ է հայցադիմումում և դատական քննության ընթացքում ներկայացնել համոզիչ փաստեր այն մասին, որ ոչ նյութական փոխհատուցումը բավարար չէ հասցված վնասը վերականգնելու համար, եթե ցանկանում եք ստանալ նաև նյութական (դրամական) փոխհատուցում:

7. Փոխհատուցման պահանջ

Վնասի դիմաց քաղաքացիաիրավական պատասխանատվությունը իրականացվում է «փոխհատուցման» և «գույքային վնասի» հատուցման եղանակով: **Փոխհատուցման** պահանջը դատական կարգով պաշտպանվելու միջոց: **Գույքային վնասը՝** անձի կրած նյութական բնույթի զրկանքներն են, կորուստը, այդ թվում՝ դատական ծախսերը, խախտված իրավունքների վերականգնման համար կատարված ողջամիտ ծախսերը, որոնք համապատասխան փաստերով դատարանում ենթակա են հիմնավորման և վերականգնման:

Փոխհատուցման չափը որոշում է դատարանը՝ ելնելով կոնկրետ գործի առանձնահատկություններից, այդ թվում՝ վիրավորանքի կամ զրպարտության եղանակից և տարածման շրջանակից, ինչպես նաև վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունից:

Փոխհատուցման, ինչպես և՝ գույքային վնասի հատուցման հարցը դատարանը քննում է բացառապես այն անձի պահանջով, ում պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել է:

Փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հաշվի չի առնում վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով անձին պատճառված գույքային վնասը:

Մարդու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու դիմաց փոխհատուցումը **չպետք է շփոթել գույքային վնասի հետ,** և այդ փոխհատուցումը **չպետք է դիտել որպես տույժի կամ տուգանքի ձևով սահմանվող պատիժ:**

Փոխհատուցման չափը սահմանելիս պետք է հաշվի առնել **վիրավորանքի կամ զրպարտության եղանակը և տարածման շրջանակը, ինչպես նաև վիրավորողի կամ զրպարտողի** գույքային դրությունը**:**

Գույքային դրությունը հաշվի առնելու պահանջը, մասնավորապես, ենթադրում է.

– հաշվի առնել պատասխանողի եկամուտների չափը,
– թույլ չտալ պատասխանողի համար անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա վերջինիս գործունեության համար:

Զրպարտության և վիրավորանքի գործերով հայցվորը կարող է պահանջել գումարի բռնագանձում՝ **փոխհատուցում**, որպես իր՝ պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող գործողություններից պաշտպանվելու միջոց, և **գույքային վնաս**, որպես վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով իր կրած նյութական բնույթի զրկանքների **վերականգնման** միջոց: Ցանկացած այլ նպատակով վնասի փոխհատուցումն օգտագործելն անհամաչափորեն սահմանափակող ազդեցություն կունենա ազատորեն արտահայտվելու իրավունքի վրա, ինչը չի կարող գնահատվել, որ «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Հայցվորը փոխհատուցման չափը հիմնավորելու համար կարող է դատարան ներկայացնել պատասխանողի գույքային դրությունը բնութագրող ապացույցներ (տեղեկանքներ, հայտարարագրեր) կամ հղում կատարել հանրամատչելի աղբյուրների, իսկ նման ապացույցներ ձեռք բերելու փորձերի անհաջողության դեպքում՝ միջնորդություն ներկայացնի դատարանին, որպեսզի վերջինս ապահովի այդ ապացույցները: Պատասխանողն իր հերթին կարող է դատարան ներկայացնել իր գույքային դրությունը բնութագրող ապացույցներ՝ հիմնավորելու համար պահանջվող փոխհատուցման չափի անհամաչափությունը:

Այն դեպքերում, երբ վեճը ծագել է հանրային առողջության և բնապահպանական հրատապ թեմաների շուրջ հանրային բանավեճ ծավալող խմբերի հրապարակային հայտարարություններից, դատարանը փոխհատուցման չափը որոշելիս պետք է հաշվի առնի նաև այլ անձանց վրա փոխհատուցման բարձր չափերի հնարավոր «սառեցնող» (սահմանափակող, կաշկանդող) ազդեցությանը: Դա հատկապես վերաբերում է հանրային նշանակության գործունեություն ծավալող անձանց դեմ ռազմավարական դատավարություններին (տե՛ս SLAPP դատավարությունների վերաբերյալ նկատառումները Բաժին 1-ի 13-րդ ենթաբաժնում): Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը [54] արձանագրել է, որ ժողովրդավարական հասարակությունում շահերի պաշտպանության ցանկացած մեծ կամ փոքր ոչ ֆորմալ խումբ, ինչպիսին London Greenpeace-ն էր, պետք է հնարավորություն ունենա իր գործունեությունը ծավալել արդյունավետ կերպով: Հանրային առողջության և բնապահպանական հրատապ խնդիրների շուրջ հանրային բանավեճ ծավալող խմբերի և անհատների գործունեության համար հնարավորություններ ու պայմաններ ապահովելու հանրային շահը լայն է: Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ որքան ավելի համընդհանուր լինի խոշոր առևտրային կազմակերպությունների գործունեության մասին տեղեկատվության և գաղափարների տարածման հանրային հետաքրքրությունը, այնքան ավելի կարևոր է ուշադրություն դարձնել այլ անձանց իրավունքների վրա զրպարտության հայցերի, դատավարությունների «սառեցնող» ազդեցությանը, որն այս համատեքստում նույնպես կարևոր գործոն է:

Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/1320/02/14 քաղաքացիական գործով 2016թ. դեկտեմբերի 2-ին հրապարակված որոշմամբ անդրադարձել է փոխհատուցման պահանջին ու մեկնաբանել է, որ անձի պատիվը, արժանապատվությունն ու գործարար

[54] *Steel-ը և Morris-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 68416/01, ՄԻԵԴ, 15.2.2005թ, կետ 95:

համբավը ոչ նյութական բարիքներ են, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի հիմքով դրանց հասցված վնասը հատուցելու առաջնահերթ ձևեր է սահմանել ոչ նյութական միջոցները՝ նյութական կամ ոչ նյութական հատուցման պահանջ ներկայացնելու ընտրության հարցը վերապահելով վիրավորանքի կամ զրպարտության ենթարկված անձին: Հետևաբար, անձը կարող է պահանջել օրենքով սահմանված հատուցման ձևերից մեկը կամ մի քանիսը: Դա նշանակում է, որ **եթե անձը վիրավորանքի կամ զրպարտության համար պահանջել է միայն փոխհատուցման ոչ նյութական միջոց, դատարանը պարտավոր է բավարարվել միայն ոչ նյութական փոխհատուցման միջոց կիրառելով**, իսկ եթե անձը պահանջել է հատուցման և՛ ոչ նյութական, և՛ նյութական միջոցներ կիրառել, ապա **առաջին հերթին կիրառման է ենթակա հատուցման ոչ նյութական միջոցը և միայն դրա անբավարարության դեպքում դատարանը կարող է կիրառել նյութական փոխհատուցման միջոցը:** Նման հանգամանքում, ըստ Վճռաբեկ դատարանի, դատարաններն իրավասու չեն հատուցման ոչ նյութական և նյութական միջոցներ կիրառելու պահանջներ ներկայացված լինելու պարագայում կիրառել միայն նյութական միջոցը, քանի որ դա կենթադրի նյութական հատուցման միջոցներ տրամադրելով ոչ նյութական բարիքների դեմ անարգել ոտնձգելու հնարավորություն ընձեռել: Ոչ նյութական արժեքին վնաս պատճառելու պարագայում միայն նյութական հատուցման միջոց կիրառելը չի կարող համարվել համաչափ պատասխանատվության միջոց, եթե տուժողի համար իր ոտնահարված արժանապատվության վերականգնման համար որպես առաջնային փոխհատուցման ձև ներկայացվել է հենց ոչ նյութական հատուցման պահանջը:[55]

Վերը նշվածից բխում է, որ երբ վնաս է պատճառվում ոչ նյութական արժեքին, վնաս պատճառողի կողմից ոչ նյութական հատուցում տրամադրելիս է, որ արդյունավետորեն ապահովվում է վնասի հատուցման համաչափությունը, քանի որ ոչ նյութական հատուցում տրամադրելիս (հրապարակայնորեն ներողություն խնդրելիս կամ հրապարակայնորեն հերքում հրապարակելիս) վնաս պատճառողը նույնպես որոշակի ոչ նյութական զրկանքներ է կրում՝ մասնավորապես ընդունելով իր կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելը: Դա հատկապես կարևոր է տուժող կողմի համար, ում պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել է հրապարակայնորեն: Այլ կերպ ասած, որպես կանոն, հենց ոչ նյութական հատուցման պայմաններում է, որ արդյունավետորեն վերականգնվում են անձի ոտնահարված ոչ նյութական արժեքները: Դա է պատճառը, որ օրենսդրի կողմից որպես առաջնային փոխհատուցման ձև նախատեսվել են հենց ոչ նյութական հատուցումները՝ չբացառելով նաև միայն նյութական հատուցում ներկայացնելու պահանջ ներկայացնելու հնարավորությունը, որպիսի կարգավորումը բխում է հայցվորի տնօրինչականության սկզբունքի էությունից:

Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/1320/02/14 քաղաքացիական գործով 2016թ. դեկտեմբերի 2-ի հրապարակված նախադեպային որոշումը կարևոր նշանակություն ունի փոխհատուցման չափի, ձևի և տեսակի ընտրության հարցում, հետևաբար, նպատակահարմար է այն վկայակոչել ձեր հայցերում ու դիմումներում:

[55] Վճռաբեկ դատարանի՝ Վարդան Աթայանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/1320/02/14 քաղաքացիական գործով 2016թ. դեկտեմբերի 2-ի որոշում, էջ 6:



ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Հասցե՝ ՀՀ, Երևան 0010, Փ. Բուզանդի 1/3
Հեռ.՝ +374 91435136
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am, www.givemeinfo.am